

# Այուրեղյազ երկիր

... Եվ չիք ուրիշ ուղի՝  
փառապանքից ուղիղ:  
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Գինը 100 դրամ:  
ԳՐԱՏԱՐՎՈՒՄ  
15 ՕԳՈՍՏՈՍԻ 2012Ը • № 19 (260)

www.syuniacyerkir.am



ՖՈՏՈՒՄ

## «Քարե ներկայություն» եւ անվանակոչություն

ՀԻՇԱՏԱԿԻ ԶՎԵՐԺԱՑՈՒՄ

«Եթե աշխատասիրություն, նվիրում եւ ազնվություն լինի, բոլոր ժամանակներում կարելի է աշխատել ու շենացնել հայրենիքը: Պաշտոնյաները պետք է գիտակցեն, որ պաշտոնն ինքնահաստատման համար է, որ մարդասիրությունը պահանջում է հոգատարություն ուրիշների նկատմամբ», - սիրում էր կրկնել վաստակաշատ շինարար, Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի Սարգիս Վարդանյանը:

Հուլիսի 8-ին լրացավ Կապանի կառուցապատման գործում նշանակալի ավանդ ունեցող անձնավորության 100-ամյակը: Մեկ ամիս անց՝ օգոստոսի 8-ին մարզկենտրոնի «Լեռնագործ» հյուրանոցի հարեանությամբ հանդիսավորությամբ բացվեց նրա հուշարձանը: Կապանում Ա.Վարդանյանի «քարե ներկայությունը» օրվա միակ խորհուրդը չէր, Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակից սկիզբ առնող Երկաթուղայինների փողոցն այսուհետեւ կրելու է նրա անունը: Իրադարձությանը մասնակցում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ, նաեւ Ա.Վարդանյանի օրոք քաղաքի կառուցապատմանը մասնակցած շինարարներ: Հուշարձանի բացման առիթով օրհնության խոսք ասաց Կապանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Գալուստ վարդապետ Դարբինյանը:

– Ցավոք, կենդանության օրոք մենք արժանիորեն չենք գնահատել, չենք հասցրել մեծարանքի եւ հիացմունքի խոսք ասել, այնուհանդերձ, կիսանդուր տեղադրմամբ եւ փողոցի անվանակոչությամբ մեր վերաբերմունքն ենք արտահայտում Սարգիս Վարդանյանի հանդեպ եւ նաեւ սերունդներին ենք թողնում նրա անունն ու գործը, - ասաց Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանը, - անգնահատելի է նրա ավանդը մեր եւ հարեւան համայնքների կառուցման գործում, մեր տարածաշրջանի համար կարեւորագույն ձեռնարկությունները՝ Քաջարանի, Կապանի, Ազարակի կոմբինատները նրա ղեկավարությամբ են կառուցվել: Իր անսպասելի անհույս կյանքը, կազմակերպչական հմտություններով կարողանում էր ոգեւորել «Քաջարան-շին» տրեստի բոլոր աշխատողներին, պայքարել մեր տարածաշրջանում շինարարության ծավալները մեծացնելու համար: Բարեբախտաբար, մեր շարքերում են նրա ժամանակակիցները, կրտսեր գործընկերները, մարդիկ, ովքեր աշխատել, ընկերություն են արել Սարգիս Վարդանյանի հետ, եւ նրանց պատմություններով կարողանում ենք լիարժեք պատկերացում կազմել մի մարդու մասին, ով կարող էր ասել. «Ես կառուցել եմ Կապանը»:

Իր ելույթում Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանը մասնավորապես այն միտքը հայտնեց, որ «Քաջարան-շին» տրեստի կառավարչի պաշտոնը Վարդանյանի համար չդարձավ գոտու անձնական բարեկեցության ապահովման աղբյուր եւ ոչ էլ ավելի բարձր պաշտոնների հասնելու թռիչքահարթակ, այլ շուրջ քառորդ դար եղավ հայրենի շրջանի բազում քաղաքաշինական եւ ճարտարապետական» էջ 2

## Գլխավոր ճակատամարտը՝ Կապանում

Միսիանից գլխավորույս փախչող ՀՀԿ-ն հիմնական ճակատամարտը կտա Կապանում, իսկ Միսիանը կփորձի փոշել ԲՀԿ-ի կավե ոտքերի տակ

### ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ՝ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀԿ-ն, ըստ էության, սյունիքյան ճակատում իր ունեցած բոլոր հնարավորությունները կենտրոնացնում է Կապանում: Արտուր Աբայանի վերը ընտրության կանխումը հռչակված է 2012-ի թիվ մեկ խնդիր, ինչի համար եւ հայտարարվել է կողմնակիցների մրցիկը: Արտուր Աբայանը

նի ճամբարում, մինչդեռ, հավաքվում են (իրենց իսկ լեզվով ասած) կապանամետ ուժերը, արժանապատիվ Կապանի կողմնակիցները, Կապանի նվաստացման հակառակորդները: Այդ ուժերն ընտրություններին վերադաս իշխանությունների ցանկացած միջամտություն համարում են ստորացուցիչ հանգամանք Կապանի համար եւ գտնում են, որ քաղաքապետի ով լինելը պետք է որոշեն միայն ու միայն կապանցիները՝ առանց

վերադաս իշխանավորների, առանց բիրդանաղա օլիգարխի ու նրանց սպասավորների: Արտուր Աբայանի ճամբարին, մեր ունեցած տեղեկություններով, հարում են նաեւ ՀՀԿ-ի տեղական բազմաթիվ ակտիվիստներ, այդ կուսակցության շարքային անդամներ: Չի բացառվում, որ ընտրությունը դառնա Հանրապետականի կապանյան կառույցի հերթական երկփեղկման ճարտարությունը՝ էջ 7

## Մի օտարականի մասին, ով գոռեկորեն ծաղրում է կապանցիներին

### ՋՐԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Օգոստոսի 9-ին Կապանում էր «Հայքրմուղկոյուղի» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենը: Իր խոսքով՝ Կապան է եկել անձամբ ծանոթանալու այստեղ տիրող իրավիճակին, քանի որ ջրի պղտորման հետ կապված բավականին աղմուկ է բարձրացել, եւ ամենատարբեր ասեկոսներ են իրեն հասել: Ըստ Պատրիկ Լորենի՝ առաջին հերթին ինքը պետք է պաշտպանի իր գլխավորած ընկերության շահերը (այ՛ք քեզ քաջություն): Խնդրո առարկայի վերաբերյալ, մինչդեռ, այլ կարծիքի է Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանը: Վերջինիս խոսքով՝ առաջնահերթ պետք է պաշտպանել կապանցու շահը: Պարոն Լորենը հանդիպման հենց սկզբից հայտարարեց, որ ստեղծված իրավիճակում կարեւորն արդարացի մոտեցում ցուցաբերելն է, սակայն մինչ «Հայքրմուղկոյուղի» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի «արդարացի» մոտեցմանը ծանոթանալը, ասենք, որ արդարությունը եւ արդարացի մոտեցումն արժեքներ են, որոնք, անկախ ազգային պատկանելությունից,

չեն փոխվում: Պատրիկ Լորենը ներկայացրեց առաջիկա 6-7 տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրերը: «Քանի որ այժմ Կապանում կա ջրի մոտ 80%-ի կորուստ, առաջնահերթ նպատակն է լինելու քաղաքին ստորգետնյա աղբյուրներից ջուր մատակարարելը: Նաեւ մախատեսվում է Գեղի մաքրման կայանի վերանորոգումը, որտեղ կտեղադրվեն նորագույն մաքրող սարքավորումներ», - ասաց նա: Անդրադառնալով «ԲԱՍՕ Մետալ» ընկերության կողմից Գեղվա ձորի ջրընդունիչի տարածքում հանք շահագործելու մտադրությանը՝ նա ասաց. «Ինչ վերաբերում է այդ ընկերությանը, որը պատրաստվում է այդտեղ հանք շահագործել, պետք է ասեն, որ արտոնագիրը տրվել է ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության կողմից: Մենք ոչ մի կապ չունենք դրա հետ, թույլտվություն տալու իրավասություն մենք չունենք: Ցավոք, այդ արտոնագիրը տրամադրելիս, հավանաբար, մոռացել են, որ տվյալ տարածքում ջրընդունիչ կա: Այցիս նպատակն այն էր նաեւ, որ ամձամբ տեսնեի եւ համոզվեի, թե այդ ընկերությունն ինչ գործունեություն է իրականացնում: Պարզվեց, որ մոտակա երկու տարում նրանք կիրականացնեն միայն հետազոտական աշխատանքներ: Եվ դա ջրի համար ռեալ վտանգ չի կարող լինել: Խնդիրն է հայտ կզա հանքի շահագործման ժամանակ միայն: Հետագայում ջրօգտագործողների շահերը պաշտպանելու համար մենք նշված ընկերության հետ փոխհարաբերություններ» էջ 7



Պատրիկ Լորեն, «Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ տնօրեն

Լուսանկար՝ Ա. Նավասարդյանի



ԵԶԾԾՅՍՅԾԾ

# Մեղրի-Նռնաձոր ճանապարհը՝ իրողություն

**Մեղրու ճանապարհաշինական ընկերության շնորհիվ 2007թ. Նռնաձորում առաջին անգամ կառուցվեց դպրոցական շենք՝ 60 աշակերտի համար: Այդ կազմակերպության ձեռամբ էր, որ 2010թ. գյուղը ստացավ խմելու ջուր (2,3 կմ երկարությամբ ջրագծով ջուրը բերվեց գյուղի մերձակալից) եւ գիշերային լուսավորություն (2009թ.) ու հիմնասարկաված բուժկետ (2009թ.):**



Լուսավորվող Զ. Գամբարձումյանի

Մեղրու շրջանի Նռնաձոր գյուղը տասնամյակներ շարունակ գրեթե ճանապարհի չի ունեցել: Նռնաձորցիների համար նոր ու բարեկարգ ճանապարհ ունենալը երազանք էր դարձել: Շատերը նույնիսկ չէին հավատում, որ ճանապարհը կվերանորոգվի, գյուղից Մեղրի կհասնեն 15 րոպեում՝ նախկին մեկ ժամվա փոխարեն: Գյուղացիների սպասելիքներն այսօր արդեն իրականություն է դարձրել Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերությունը, որը գյուղի համար (նախկին երկաթուղուն զուգահեռ) նոր ճանապարհ է կառուցել (2.4կմ): Այն ունի 6մ 60սմ լայնություն՝ շատ քիչ շրջադարձերով, ի տարբերություն նախկինի, որն ուներ բազմաթիվ շրջադարձեր, վտանգավոր հատվածներ, անձրեաշրերից առաջացած փոսեր: Մարդիկ տարիներով երթեկել են մի ճանապարհով, որն օր օրի կարծես թե փլվում էր. ամեն անգամ անձրեից հետո երթեկելի մասի կեսն այլեւս չէր լինում, ճանապարհը շատ վտանգավոր էր դառնում: «Ես միշտ էլ ցանկացել եմ, որ Նռնաձորն ունենա բարեկարգ

Պետական ու ռազմավարական նշանակության այդ ճանապարհի կառուցումը իրագործել է Մեղրու ճանապարհաշինական ընկերությունը՝ մեծահամբավ ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանի գլխավորությամբ:

ճանապարհ, եւ աստիճանաբար այդ ցանկությունն իրականություն ենթ դարձրել: Արդեն հինգ ամիս է՝ Նռնաձոր գյուղի համար նոր ճանապարհ ենթ կառուցում, որովհետեւ հինգ ամիսն էր վերանորոգել», – ասում է Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը: Նոր ճանապարհի կառուցման ֆինանսավորումը կատարվել է պետական բյուջեի հաշվին, եւ ծրագրին արժեցել է 160 մլն դրամ: Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերությունը ճանապարհի կառուցման պայմանագիրը կնքել է ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարության հետ, ըստ որի, շինարարական աշխատանքները պետք է ավարտվեն օգոստոսի 30-ին: Բայց, ինչպես Ազատ Գասպարյանն է նշում, աշխատանքներն ավարտվել են նախատեսված ժամկետից 15 օր շուտ: Նռնաձորի նոր ճանապարհի կառուցումը կարելի է մեծ նշանակության իրադարձություն համարել ոչ միայն Մեղրու տարածաշրջանի, այլ նաեւ մարզի ու հանրապետության համար, քանզի հաղորդակցության ոլորտները յուրաքանչյուր երկրի համար ունեն տնտեսական, ինչպես եւ պաշտպանական ու ռազմավարական նշանակություն: Նռնաձորը, լինելով մարզի ամենահարավային կետը, վաղուց պետք է ունենար բարեկարգ ճանապարհ: Ինչպես Ազատ Գասպարյանն է ասում. «Նոր ճանապարհի շնորհիվ Նռնաձորը ծաղկունք կապի, մարդիկ արդեն սկսել են մշակել իրենց այգիները, որոնք տարիներով չէին մշակում: Աշխատանքները դեռ ամբողջովին չենք ավարտել, բայց արդեն եռուզեռ է գյուղում, շատերը վերադարձել են իրենց տները՝ կարծես փորձելով մշտական բնակություն հաստատել այնտեղ»: ճանապարհը Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերության տնօրենը նմանեցնում է նոր ծոված երեխայի, որի նկատմամբ պետք է խնամք տանել, հետեւողական լինել ու պահպանել: ճանապարհի կառուցապատման տեխնիկական հսկիչ Արշավիր Մովսիսյանը ներկա է եղել ամբողջ աշխատանքներին, աշխատակազմի հետ հաղթահարել է բարդություններ, դժվարություններ եւ այսօր կատարվածը հրաշք է համարում. «Զէնք հավատում, որ տարիներ հետո Նռնաձորը այսպիսի ճանապարհ կունենա: Ուրախանում եմ, երբ տեսնում եմ գյուղացիների բերկրանքը, միաժամանակ հպարտանում եմ, որ այս ճանապարհի կառուցման գործում ես եւս ներդրում ունեմ», – ասում է Արշավիր Մովսիսյանը: Նոր ճանապարհի հինգ ամիս տեսած կառուցումը բարդ ու դժվար է եղել: Այդ ամիսների ընթացքում բոլոր աշխատանքներին հետեւել է աշխույժ Գուրգեն Գամբարձումյանը, ով մեզ հայտնեց իր տպավորությունը՝ «Նախկինում այստեղ սալի ճանապարհ է եղել: Փորձել ենք անել անհարինը՝ ժամանակի մեջ տեղավորվելու համար, որին նպաստեց նաեւ մեր աշխատակազմի պատրաստակամությունը»:

Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերությունն այս տարիների ընթացքում բազում ճանապարհներ է կառուցել, շատ բարդություններ հաղթահարել շրջանի տարածքում: Ունեցել է տասնյակ ձեռքբերումներ, որոնցից մեկը կարելի է համարել 2009 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ վերանորոգված, կենսական նշանակություն ունեցող ավտոճանապարհները՝ Մեղրու տարածաշրջանի գրեթե բոլոր համայնքներն ընդգրկող: Ազատ Գասպարյանը նվաճում է համարում նաեւ Կապան-Ծավ-Մեղրի այլընտրանքային ճանապարհի կառուցումը, որը շատ կարեւոր է Մեղրու շրջանի, ինչպես եւ Կապանի շրջանի ծավի ենթաշրջանի համար:

Այս տարի նույնպես Մեղրու «ՇՇՇ»-ն ունի բազում ծրագրեր, անելիքներ: ՀՀ պաշտպանության նախարարության հետ ունի պայմանագիր, ըստ որի N գործառնային համար կառուցվում է ավտոհավաքակայան: Համագործակցում է նաեւ Սյունիքի մարզպետարանի հետ՝ Ազարակ եւ Մեղրի քաղաքների ներհամայնքային ճանապարհները բարեկարգելու համար: Հավելենք նաեւ, որ Մեղրու «ՇՇՇ» ԲԲ ընկերության շնորհիվ է, որ Մեղրու լեռնանցքում ձմռանը ստեղծվող արտակարգ իրավիճակներն արագ կարգավորվում են, եւ ճանապարհը միշտ երթեկելի է լինում: Ընկերությունն այդ ամենի հետ մեկտեղ շարունակում է վերազինվել նոր տեխնիկայով՝ առանց որի հնարավոր չէ պատկերացնել ճանապարհների ձմեռային պահպանությունը եւ ճանապարհաշինական աշխատանքների արդյունավետ ու որակյալ իրականացումը: Ինչպես Ազատ Գասպարյանն է ասում՝ «Մեղրու լեռնանցքում ձմեռը սկսվում է հոկտեմբերից եւ վերջանում մայիսին, ու այդ ամբողջ ընթացքում այնտեղ տեղադրված հենակետն օր ու գիշեր հետևում է ճանապարհի երթեկելիության ապահովմանը»:

Անդրադառնալով Նռնաձոր գյուղի ապագային՝ վաստակաշատ շինարարն ավելացրեց նաեւ, որ կցանկանար գյուղը տեսնել երիտասարդներով բնակեցված, գյուղապետարանը, համայնքային կենտրոնը՝ բարեկարգված: Նրա ցանկությունը, հավատում ենք, իրականություն կդառնա, քանզի խոստումները գործի վերածելու բարի ավանդույթ ունի ինքը:



Մեղրի-Նռնաձոր նոր ճանապարհը (ներքեւում՝ հինը):



Լուսավորվող Զ. Գամբարձումյանի



Մեղրի-Նռնաձոր ճանապարհին, աշխատանքային դրվագ:



2007թ. Նռնաձորում կառուցված դպրոցական շենքը:

**ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ**













# Ավանդական դարձած ուխտագնացություն-արշավ

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

Սիսիանցի երիտասարդներն այս տարվա ուխտագնացություն-արշավի մասնակիցների ավելի քան 500 շապիկի վրա պատկերել էին Ջորջա քարերի պատկերը: Արշավականները նաեւ պատահաբար են պատրաստել՝ «Մենք ենք Սիսիանի վաղվա տերերը», «Սիսիանը հզոր է մեզանով», «Ապագան մերն է», «Միասնությունը ուժ է» գաղափարները բովանդակող:

ԵՊ լեզվաբանական համալսարանի ուսանող Լորենտան արշավին մասնակցում է արդեն 3-րդ տարին: Երկու տարի է, ինչ աղջնակն ակտիվորեն ներգրավված է նաեւ կազմկուսակցությանը: Նկատել է՝ արշավի մասնակիցների թիվը տարեցտարի ավելանում է:

**«Արշավը լավ հնարավորություն է սիսիանցի երիտասարդների համար՝ համախմբվելու, միասին ուրախանալու, ինչու չէ՝ միմյանց ավելի մոտիկից ճանաչելու: Արշավի երկրորդ, բայց ոչ պակաս կարեւոր նպատակներից է՝ ճանաչել մեզ շրջապատող տեսարժան եւ պատմական նշանակություն ունեցող վայրերը»**, – ասում է Լորենտա Պետրոսյանը:

Սիսիանում երիտասարդների առօրյան առավել բովանդակալից դարձնելու նպատակով քաղաքային իշխանությունը 3 տարի առաջ հենց ուսանողների առաջարկով որոշեց արշավներ կազմակերպել:

Ամեն տարի այդ օրը հանրապետության տարբեր մարզերից, ամբողջ արտերկրից երիտասարդներ են այցելում Սիսիան՝ շփվելու իրենց հասակակիցների հետ, տեղեկություններ քաղելու հայրենիքի պատմաճանաչական իրադրությունների մասին: Երեսանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողուհի Լեզապի Նազարյանն արշավական-

ներին միանալու է եկել Արմավիրի մարզից: Շատ կցանկանար, որ իր հայրենի քաղաքում՝ Մեծամորում էլ նման արշավներ կազմակերպվեն:

Լյուդմիլան, Ռադիկն ու Յուրին իրենց ծնողների ծննդավայրում հյուր են: Իրենք ծնվել ու մեծացել են Միսիկոյի քաղաքում: Վստահեցնում են՝ արշավից անմոռաց հուշեր են տանելու: Դրանք միշտ թարմ կման նաեւ լուսանկարների տեսքով: **«Կզմանք, բոլորին ցույց կտանք՝ որտեղ ենք եղել»**, – ասում է Լյուդմիլան, **«իրենք էլ պիտի տեղերում չեն եղել»**, – ավելացնում է Ռադիկը:

Նախ՝ ծաղիկներ Համո Սահյանի արձանին, այնուհետեւ հարգանքի տուրք Արցախում նահատակված սիսիանցիների շիրիմներին: Արշավականները եղան Սյունի վանքի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, մասնակցեցին Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին եւ խաղողօրհնեքի արարողությանը: Քահանան օրհնեց երիտասարդներին մատուցվող ավանդական մատակարարը:

Սիսիանցի երիտասարդները 2 կմ քայլելով հասան մ.թ.ա. 3-2 հազարամյակներին թվագրվող եւ աշխարհում պահպանված մեզայիթյան հազվագյուտ հուշարձան՝ Ջորջա քարեր:

**«Խտրիկորդը մնում է անփոփոխ՝ երիտասարդներին ծանոթացնել Սիսիանի տարածաշրջանի պատմաճանաչական վայրերին: Միջազգային բնույթ է կրում: Նկատել ենք, որ ուսանողներն անհամբերությամբ են սպասում այդ օրվան: Օրը կարծես համասիսիանյան բնույթ է կրում, իսկ կազմակերպիչները դարձել են հենց մեր ուսանողները»**, – նշեց Սիսիանի համայնքի ղեկավար Աղասի Հակոբյանը:

Սիսիանի ավագ դպրոցի աշակերտ Հայկն արշավին առաջին ան-



գամ է մասնակցում: Ապագա տնտեսագետը տպավորված է եւ ուրախ, որ մասնակցեց ուխտագնացություն-արշավին: Հայարտանում է, որ Սիսիանում երիտասարդության օրը մեծ շուքով է նշվում: Ստացած տպավորությունները Հայկին մոռանալ են տալիս ամբողջ հոգնածությունը:

**«Անցկարագրելի տպավորություններ ունեն: Ամեն ինչ շատ լավ էր, իմ բավարարված եմ զգում: Ամենատարիսը քայլարշավի պահն էր»**, – ասում է Հայկը:

Ուրախ երգ, պար, ժամանցային խաղ-մրցույթներ, այս ամենն արդեն Շաքեի ջրվեժի տարածքում:

Գինի, մատաղ, ուրախ տրամադրություն: Սիսիանի համայնքի ղեկավար Աղասի Հակոբյանյանը մոտենում է սեղաններին եւ մաղթում, որ սիսիանցի ուսանողները միասնական լինեն եւ շենացնեն հայրենի քաղաքը, երկիրը: **«Ուրախ եմ, որ սիսիանցի երիտասարդները ՏԻՄ-երի ուշադրության կենտրոնում են: Այսպիսի միջոցառումներ պետք է ավելի հաճախ կազմակերպվեն: Նոր ընկերներ ենք ձեռք բերում: Միասնական լինելն ամենակարեւորն է»**, – ասում է ԵՊ ազգարային համալսարանի ուսանող Նարինե Հովհաննիսյանը: **«Անհամբերությամբ էի սպասում**

**այս օրվան: Առաջին անգամ եմ մասնակցում, շատ հետաքրքիր էր, շնորհակալ եմ կազմակերպիչներին, շատ զոհ եմ»**, – նշում է Երեսանի մանկավարժական համալսարանի ուսանող Հասմիկ Կիրակոսյանը:

Երեկոյան Սիսակ Նահապետի անվան հրապարակում համերգային շուռ ծրագրով հանդես եկան Սիսիանի եւ մայրաքաղաքի երաժշտական հաստատություններում սովորող սիսիանցի տաղանդաշատ ուսանողները: Ավանդական դարձած ուխտագնացություն-արշավը եզրափակվեց հրավառությամբ:

**ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՅԱՆ**

**ԳՊՐՈՑ, ՌԻՍՈՒՑԻՉ**  
Ռրոտան (Սիսիանի շրջ.) ■  
ՂԱՎԱՅՅԱՆ ՊԱՐԿՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՏԱՎՈՐ  
ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ույծ ■ ԱՎԵՏՅԱՆ ԱՐՏԱԿ ՌՈՒԲԻԿԻ ■  
ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ույծ ■ ԵՂԻՍԱՅԱՆ ԵՐՎԱՆԻ  
ԼՈՐԻԿԻ ■ ԲՀԿ ■ «ՀԱՎՈՐՁՆԱՅԱՆ  
ԵՎ ՊԱՍՏՅԱՆ ՀԵԿ» ՍՊԸ, ՎԱՐՊԵՏ

Ույծ ■ ԽՈՐՈՎԱՅԱՆ ՎԱՐՊԱՆ  
ՌՈՒԲԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Ույծ ■ ՀԱՎՈՐՁՅԱՆ ԱԼԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ  
■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Սալվարդ ■ ԱՆԴՐԵԱՅԱՆ ՄԿՐՏԻՉ  
ՆՈՐԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
«ՍԻՍԻԱՆԻ ՀՀԿ» ՍՊԸ ՄԵՆԵՋԵՐ

Սալվարդ ■ ՄԵՍՐՈՔՅԱՆ ՎԱՐՊԱՆ  
ՍԵՐՅՈՒՄՅԱՆ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Սառնակունք ■ ԱՎԵՏԻՅԱՆ ԿԱՐՈ  
ՍԻՆՈՂԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՍԱՆՆԱԿՈՒՆԵ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱՎԱՐ

Սառնակունք ■ ՄԿՐՏՉՅԱՆ  
ՍԱՆՈՒՉԱՐ ՄԻՔԱՅԵԼԻ ■ ՀՀԿ ■  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Սառնակունք ■ ՎԱՐՊԱՆՅԱՆ  
ՆՈՐԱՅՐ ՍՊԱՐՏԱԿ ■  
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■ «ՀԱՅՓՈՍ»  
ՓԲԸ ՊԵՏ

Սեւաքար ■ ՀԱՎՈՐՁՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ  
ԲԱԳՐԱՏԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Սեւաքար ■ ՂԵՅԱՆԴՅԱՆ ԻՐԻՆԱ  
ՌՈՒԲԵՆԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
Սեւաքարի գյուղապետարան,  
հաշվապահ

Սիսիան ■ ԱՋՈՅԱՆ ՄՀԵՐ ՎԵԼԻԿԻ ■

ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■

Սիսիան ■ ԲԱԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ  
ՇՈՒՐԱՅԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ  
■ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, ՏՆՏԵՍՎԱՐ

Սիսիան ■ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ  
ՆԻԿՈԼԱՅԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Սիսիան ■ ՀԱՎՈՐՁՅԱՆՅԱՆ ԱՂԱՍԻ  
ՄԱՍԻԿՈՆԻ ■ ԲՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Սիսիան ■ ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ  
ԼԵԳԻԵՐԻ ■ ՀՅԳ ■

Սյունիք ■ ԱՌՈՒՍԱՅԱՆ ՆՎԱՐԴ  
ՆՈՐԱՅԻ ■ ՀՀԿ ■ Սյունիքի  
գյուղապետարան, գյուղապետի  
խորհրդակաճ

Սյունիք ■ ՂՈՒԿԱՅԱՆ ՍԵՐԳԵՅ  
ԱՇՈՏԻ ■ ՀՀԿ ■

Սյունիք ■ ՍԱՐԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԲԱԳՐԱՏԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Սպանդարյան ■ ԱՋԻՋՅԱՆ ՍԻՍԱԿ  
ՍԵԲԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Սպանդարյան ■ ՍԱՐԳՅԱՆ ՄԱՍԻՍ  
ՈՒՋՄԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
«ԼՈՐԱԳԵՏ ՀԵԿ» ՍՊԸ

Սպանդարյան ■ ՍԻՄՈՆՅԱՆ  
ՍՊԱՐՏԱԿ ՌԱՅԻԿԻ ■ ՀՀԿ ■  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Սվարանց ■ ՍԱՐԳՅԱՆ ԱՐԹՈՒՐ  
ԼԵՆԱՐԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Սվարանց ■ ՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԼԱՎԻԿ  
ԱՐՇԱՎԻՐԻ ■ ՀՀԿ ■

Սրաշեն ■ ԱՐԱՂԱՅԱՆ ՀԵՆՋԵԼ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ■ ՀՀԿ ■ «ՇԻԿԱՊՈՂ  
ԱՐԳԵԼՈՅ» ՊՈՍԿ, ՏԵՍՈՒՅ  
Սրաշեն ■ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ  
ՌԱՅԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

«Տաքսի Կապան» ՍՊԸ, Վարորդ

Վահրավար ■ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ  
ԱԲՎԱՐԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վահրավար ■ ԻՎԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՂԱՆԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
Վահրավարի գյուղապետարան,  
Հաշվապահ

Վաղատին ■ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԱՅԵՆ  
ԱՐԿԱՂՅԱՅԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վաղատին ■ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՎԱՂԱՐՇԱԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՎԱՂԱՏԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ, ԱՌԱՋԱՍԱՐ  
ՄԱՍՆԱԳԵՏ

Վանք ■ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԿՈԼՅԱՅԻ ■ ՀՀԿ ■ «Կտրիճ-Դավր»  
ՍՊԸ Հիմնադիր տնօրեն

Վանք ■ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՅՈԼԱԿ  
ՍԵՐՅՈՒՄՅԱՅԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վերին Խոտանան ■ ՀԱՎՈՐՁՅԱՆ  
ԿԱՐԵՆ ԿԱՍՈՅԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Վերին Խոտանան ■  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍԵՏ ԳՐԻԳՈՐԻ  
■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■ «Հայանտառ»  
Գործի սնտ. անտառապահ

Վերիշեն ■ ՄԻՆԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՐՏԱՎԱՉԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՎԵՐԻՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ, ՎԱՐՈՐԴ

Վերիշեն ■ ՕՐԴՅԱՆ ԱՐԱՐԱՏ  
ՍՊԱՐՏԱԿԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Տաքեվ ■ ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍԵՐՈՐ  
ԳԵՎՈՐԳԻ ■ ՀՀԿ ■ ՏԱԹԵՎ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱՎԱՐ

Տաքեվ ■ ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԱԴ  
ՆԱԿՊԵՏԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Տանձավեր ■ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ԱՐՄԵՆ ՊԵՏՅԱՅԻ ■ ՀՀԿ ■  
Համայնքի ղեկավար

Տանձավեր ■ ՄԱՐԳՅԱՆ ՍԵՂԱ  
ՍԵՐՇԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Տանձատափ ■ ՀԱՎՈՐՁՅԱՆ ՍՈՆԱ  
ԱՆԴՐԱՆԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՏԱՆՉԱՍԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆ.  
ԴՊՐՈՑ, ՏՆՏԵՍՎԱՐ

Տանձատափ ■ ՍՈՒՇԵՂՅԱՆ ՌՈՒԲԵՐՏ  
ՎԱՅՆԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Տաշտուն ■ ԳԱՐԻԵԼՅԱՆ ՀԵՆՐԻԿ  
ՌՈՒԲԻԿԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Տաշտուն ■ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԱՍԻՍ  
ՌՈՒԲԻԿԻ ■ ՀՀԿ ■

Տաշտուն ■ ՍԱՐԳՅԱՆ ՄԻՇԱ  
ԱՍԼԱՆԻ ■ ՀՀԿ ■

Տավրուս ■ ՂԱՎԹՅԱՆ ՂԱՅՐԱՍԱՆ  
ԳՐԻՇԱՅԻ ■ ՀՀԿ ■ Տավրուսի միջն.  
դպրոց, պահակ

Տավրուս ■ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԼԱՎԻԿ  
ԼՅՈՒՂԱԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Տեղ ■ ԳԱՍՏՅԱՆ ՍԱՂԱԹԵԼ ԱՐԱՄԻ  
■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Տեղ ■ ՋԵՅԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ  
ՍԱՆՍՈՒՐԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ,  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ

Տեղ ■ ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՐՏՈՒՆԻԿ  
ԱՐԱՄԻ ■ ՀՀԿ ■

Տոլորս ■ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ  
ԵԳՈՒԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Քաշունի ■ ՀԱՎՈՐՁՅԱՆ ԳԱՌՆԻԿ  
ՊԱՏՎԱԿԱՆ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Քաշունի ■ ՀՈՎԱՅՆՆԻՅԱՆ ՂԱՎԻԹ  
ԳԱՍՏՈՒՆԻԿ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Քաջարան (գյուղ) ■ ԱԹԱՅԱՆ  
ՌԱՅԻԿ ՌՈՍԻԿԻ ■ ՀՀԿ ■ Համայնքի  
ղեկավար

Քաջարան (գյուղ) ■  
ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԵՐՎԱՆԻ ■  
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■ «Հայկցանց»  
ՓԲԸ Քաջարանի մասնաճյուղ  
առաջատար մասնագետ

Քաջարան (քաղաք) ■ ԳԵՎՈՐԳՅԱՆ  
ՎԱՐՊԱՆ ՇԱՄԱԿՈՆԻ ■ ՀՀԿ ■  
Համայնքի ղեկավար

Քաջարան (քաղաք) ■  
ԼԱՍՅԱՆ ՌԱՖԵԼ ԼԵՎՈՆԻ ■  
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■ «Ապառաժ  
մայրիմ» ՍՊԸ ավագ մասնագետ

Քարահունք ■ ԱՎԵՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ  
ՍԵՐՇԻԿԻ ■ ՀՀԿ ■ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Քարահունք ■ ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ  
ԹԱՆԳԻ ■ ՀՀԿ ■ ՎԱՂԱՏՈՒՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ,  
ՌԻՍՈՒՑԻՉ

Քարահունք ■ ՍԱՐԳՅԱՆ ԹԱՌԱՆ  
ՅԱՇԱՅԻ ■ ՀՀԿ ■

Քարաշեն ■ ՄԻՆԱՅԱՆ ՍԼԱՎԻԿ  
ՅՈՒՐԻԿԻ ■ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ■  
ՔԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ, ԱՇԽԱՍԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Քարաշեն ■ ՇԱՀՆՈՒԲԱՐՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ԿԻՍԱՅԻ ■ ՀՀԿ ■  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ Ս Ի Ե Ն Ի Բ Ի Ս Ա Ր Զ Ի Ն Ա Ռ Ն Զ Կ Ո Ղ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի

**ՔԱՂՎԱԾՔ ԶՅ ՊԵՏԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ**

ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՐԶԻՆ ԱՌՆԶԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**ՑԱՆԿ 2012 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ 3 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐԱԾ 1000 ԽՈՇՈՐ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Վճարների ընդհանուր գումարը (հազ. դրամ)
4	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	664,192.7
12	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	ԿԱՊԱՆ	246,000.0
21	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆԶԱ- ՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	181,700.0
174	ԼԵՆ-ԷՔՍ	ԿԱՊԱՆ	31,702.0
176	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	31,117.3
215	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	26,800.0
230	ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԳՈՐԻՍ	25,000.0
256	ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԳՈՐԻՍ	22,700.0
302	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐԳ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	19,248.5
383	ԿԱՊԱՆԻ „ՆՈՐՈԳՇԻՆ,“	ԿԱՊԱՆ	15,950.0
426	ՎԱԼԼԵՏՏԱ	ԿԱՊԱՆ	14,906.0
440	ԹՈՒՆԵԼ	ԿԱՊԱՆ	14,473.6
493	ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ՍԻՍԻԱՆ	13,000.0
504	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	12,757.1
541	ՎԻ ԷՅՅ ՍԹՈՈՒՆ	ՍԻՍԻԱՆ	11,808.3
548	ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	11,726.1
563	ՎԱՄԱՔՍ	ԿԱՊԱՆ	11,480.8
573	ԿԱՊԱՆԻ ԲԵՌՆԱՈՒԴԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ԿԱՊԱՆ	11,331.5
620	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	10,750.1
667	ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾ. ԲԺՇԿ. ԿԵՆՏՐՈՆ	ՄԵՂՐԻ	9,934.1
683	ՄԵՂՐՈՒ ԾՇՇԶ	ՄԵՂՐԻ	9,700.0
729	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	9,000.0
731	ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ	ԱԳԱՐԱԿ	8,988.0
772	ՆԵՄԱԼ ՍՊԸ	ԿԱՊԱՆ	8,656.2
822	ՀՀ ԱՆ ՊՅՀ ՏԵՍԶ. ՍՅՈՒՆԻՔԻ ՓՈՐՉ. ԿԵՆՏ.	ԿԱՊԱՆ	8,290.0
846	ԿԱՊԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՊԱՇՏՊ.ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍ.	ԿԱՊԱՆ	8,159.5
868	ԳՈՐԻՍԻ ԳԱՄՄԱ	ԳՈՐԻՍ	7,948.0
920	ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ	ԳՈՐԻՍ	7,654.4
935	ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹ.	ՔԱՋԱՐԱՆ	7,600.0
938	ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՀԱՏՈՒԿ ԿՈՄՈՒՆԱԼԻՐ	ԿԱՊԱՆ	7,593.5
943	ԴԵՂԱԼ	ԿԱՊԱՆ	7,551.2
944	ՍԻՍԻԱՆԻ ՃԱՆՇԻՆ	ՇԱՔԵ	7,550.0
988	ԿԱՊԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՍ.Բ/Հ	ԿԱՊԱՆ	7,248.5
995	ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ ՊԵՏ.ՈՉ ԱՌԵՎՏ. ԿԱՋՄԱ	ԱԳԱՐԱԿ	7,213.8

**Ց Ա Ն Կ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ 100 ԵՎ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԹԻՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Հայտարարագրված աշխատողների թիվը
4	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	3230
17	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	Կապան	1231
27	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆԶԱՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	Ագարակ	986
90	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Կապան	407
126	ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Գորիս	312
179	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	Գորիս	222
255	ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սիսիան	159
354	ԼԵՆ-ԷՔՍ	Կապան	123
387	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐԳ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	Կապան	113

**ՑԱՆԿ ԱՌԱՋԻՆ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2012 Ֆինանսական տարվա սկզբից հունվար-հունիս ամիսներում հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)	
			ընդամենը	այդ թվում՝ ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահույթահարկ, եկամտահարկ)
2	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	11,340,035.6	4,099,867.9
9	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	ԿԱՊԱՆ	3,863,328.6	1,518,201.7
27	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆԶԱ- ՍՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	1,376,018.3	312,500.0
90	ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ	ԱԳԱՐԱԿ	527,325.3	32,138.0
131	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	340,581.9	46,000.0
179	ԱՐՊԱՆԻՎ	ԳՈՐԻՍ	253,206.2	17,210.0
219	ԶԱՆԳԵԶՈՒՐ ՄԱՅՆԻՆԳ	ՔԱՋԱՐԱՆ	202,066.0	94,866.0
302	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	141,057.4	39,651.7
451	ԴԵՂԱԼ	ԿԱՊԱՆ	95,292.5	39,113.0
474	ՄԵՂՐՈՒ ԾՇՇԶ	ՄԵՂՐԻ	87,904.8	15,500.0
489	ՄԱՐԻԼԱ	ԿԱՊԱՆ	84,797.0	2,489.4
527	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	78,948.3	52,650.5
542	ԿԱՊԱՆԻ „ՆՈՐՈԳՇԻՆ,“	ԿԱՊԱՆ	76,022.3	24,075.0
554	ԹՈՒՆԵԼ	ԿԱՊԱՆ	73,580.4	23,069.3
600	ՆԵՄԱԼ ՍՊԸ	ԿԱՊԱՆ	66,704.2	17,791.5
625	ՎՈՒՎԱՐ	ԿԱՊԱՆ	62,885.8	21,033.3
685	ՈՍԱՆԻԿ ՀԱՅՐԵՆՅԱՑ	ԱՆԳԵՂԱԿՈԹ	56,807.1	1,780.0
693	ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ	ԿԱՊԱՆ	56,067.7	33,473.1
746	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐԳ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	51,082.4	19,683.0
767	ՈԱՈՒ	ՄԵՂՐԻ	50,080.1	10,660.0
794	ՍԻՍԻԱՆԻ ԲԵՌՆԱՈՒԴԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ՍԻՍԻԱՆ	48,081.3	18,172.5
797	ՈՈՅԱԼ ՓՐԻՆԹ	Գ.ՀԱՐԺԻՍ	47,966.4	4,863.0
877	ՎԱՐԱՐԱԿՆ	ԳՈՐԻՍ	41,995.1	21,460.0
944	ՀԱՎՈՐՏԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԷԿ	ՇԱՔԵ	38,568.9	12,388.0
977	ԳՈՐԻՍԻ ԷՅՇ	ԳՈՐԻՍ	36,840.0	8,124.0
978	ՎԱԳԱ-ԳՈԼԴ	ԿԱՊԱՆ	36,829.7	15,759.9
984	ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	36,518.7	15,545.6

# Մինչև ե՛րբ պետք է անհուսուլթյան այս հուշարձանը հառնի Շինուհայրի կենտրոնում

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԱՐՈՒՄԻ ԿԱՆՈՒՅՈՒՄԻ ԴԵՄԸ

1990-ականների սկզբին, երբ սեփականաշնորհման անվան տակ մեր գյուղական համայնքների ղեկավարներն ու օրվա մյուս իշխանավորները գլխավորեցին գյուղերի ասպատակումը, շատ-շատ օբյեկտներ էլ՝ լուրջ արժեք չներկայացնող, լավ մուշտարի չունեցող, ներսում ծախու ոչինչ չունեցող, քանդված, փլված, մնացին գյուղապետարանների հաշվեկշռում, ասել է թե՛ մնացին անտեր: Դրանք թվում էր մարզի ամենախոշոր գյուղերի մեկի՝ Շինուհայրի մշակույթի ստույգ: Անցած քսան տարում, սակայն, մշակույթի այդ հաստատությունն ավերվեց հիմնովին: Եվ այդ քսան տարում գյուղական իշխանությունը (երեկվա ես այսօրվա) հնար չգտավ՝ վերականգնելու շենքն ու մարդկանց վերադարձնելու մշակութային գլխավոր օջախը: Սյունիքի մարզպետարանն էլ, տարածքային կառավարման նախարարությունն էլ անտարբեր գտնվեցին այդ հարցում եւ շենքը թողեցին բախտի քմախառնության մատնված: «Սյունյաց երկիր» դիմած շինուհայրցիներն ուզում են 33 փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեղորգյանից իմանալ՝ մինչև ե՛րբ է անհուսուլթյան եւ անորոշության այս հուշարձանը հառնելու գյուղի կենտրոնում: Եթե շենքը վերականգնվելու եւ վերանորոգելու ճար չկա,



ՍՅՈՒՆՅԱՑ

ապա, ըստ շինուհայրցիների, գյուղի ճակատին դաջված ամոթի այդ խարանդ պետք է հնարավորինս արագ քանդել ու տարածքը մաքրել...  
Ընթերցողին հիշեցնենք, որ 1980-ականներին Շինուհայրի մշակույթի կենտրոնը, որտեղ կային

գրքային հարուստ ֆոնդով գրադարան, դիսկոտեկ, հանգստի կազմակերպման այլ պայմաններ, դահլիճ եւ ստացիոնար կինոկետ, իր լավ աշխատանքով ճանաչում էր ձեռք բերել շրջանում: Հատկապես մեծ համբավ ուներ թատերական ինքնա-

գործ խումբը, որը տասնամյակների կենսագրություն ուներ եւ քանիցս հաղթող էր ճանաչվել շրջանային եւ հանրապետական փառատոներում: Մշակութային երբեմնի ճանաչված օջախը հիմա այս վիճակում է...  
**ԱՂԱՎԻՆ ԵՎԱՍՏԱՐՅԱՆ**

# Այսպես էլ կառավարում ենք

## ԱՐԾՎԱՆԻԿԻ ԾԵՐԱՆՈՑՈՒՄ

Երկու տարի շարունակ ծերանոցում խմելու ջուր չկա, իսկ խնդրո առարկա հարցի հետ շատ թե քիչ առնչություն ունեցողները լուծելու փոխարեն անընդհատ պատճառաբանություններ են հորինում:  
Արծվանիկ գյուղում գտնվող «Արծվաբույն» տարեցների շուրջօրյա սպասարկման կենտրոնը ստեղծվել է 2006թ.: Այդ ժամանակվանից էլ կենտրոնը սպասարկում է 10 շահառու: 2009-ին ծերանոցը վերանորոգվել է ճապոնիայի կառավարության տրամադրած դրամաշնորհի եւ 33 գլխավոր դասախոսի Աղվան Հովսեփյանի նվիրատվության միջոցով: Վերանորոգումից հետո հնարավորություն ստեղծվեց 10-ի փոխարեն սպասարկել մինչև 40 միայնակ եւ անօթեան տարեցի: Ծահառուների հոգսերը հոգում է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը: Չնայած այն բանին, որ վերանորոգումից հետո տարեցների թիվը ծերանոցում կարող էր ավելանալ, բայց, այնուամենայնիվ, այդ թիվը մինչև այսօր անփոփոխ է: «Արծվաբույն» կենտրոնի տնօրեն Արմենուհի Զիրոյանն ասում է, որ բարեգործական հասարակական կազմակերպության հնարավորություններն այդքան մարդու են հերիքում, չնայած նրան, որ համագործակցում են նաեւ 33 աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ ու որոշ ֆինանսավորում էլ այնտեղից ստանում:  
Կենտրոնն ունի բազմաթիվ չլուծված հարցեր, խնդիրներ: 2009 թվականին վերանորոգման աշխա-

տանքների ընթացքում, կառուցվել էր նաեւ կաթսայատուն՝ ջեռուցման հարցը լուծելու նպատակով: Բայց, ինչպես տնօրենն է նշում, շենքը ջեռուցվեց ընդամենը մեկուկես ամիս, որից հետո չկարողացան հոգալ ջեռուցման ծախսերը: Ստացվում է, որ ջեռուցման համակարգի համար ծախսած գումարներն անիմաստ էին, քանի որ մինչ օրս ծերանոցը չի ջեռուցվում: Ծերանոցի շենքի մի թեւը, որը վերանորոգվել էր, չի օգտագործվում: Վերոնշյալ խնդիրների հետ մեկտեղ տարեցների տանն արդեն երկու տարի է, ինչ ջուր չկա: Տնօրենն ասում է, որ ջրի հարցն ամենակարեւորն է, քանի որ առանց ջրի հնարավոր չէ լիարժեք իրակացնել ծերերի խնամքը: Հետաքրքիր է, որ երկու տարվա ընթացքում ոչ «Առաքելություն Հայաստան» կլն, ոչ Արծվանիկի գյուղապետարանը, ոչ էլ Սյունիքի մարզպետարանը ոչինչ չեն ձեռնարկել ծերանոցի ջրի խնդիրը լուծելու համար: «Արծվաբույն» կենտրոնի տնօրեն Արմենուհի Զիրոյանը եւ Արծվանիկի գյուղապետ Անուշավան Հարությունյանը տարբեր պատճառաբանություններ են ներկայացնում: Հավելենք նաեւ, որ ծերանոցի համար ժամանակին կառուցված ջրամբարից օգտվում էին նաեւ շրջապատի բնակիչները: «Մենք ջրի հետ կապված ոչ մի պայմանագիր չունենք, ջրի վարը չենք տալիս, եւ դա է պատճառը, որ նույնիսկ չգիտենք, թե ում կարող ենք դիմել, ում հետ համագործակցել: Բաքերով ջուր ենք հավաքում, որպեսզի կարողանանք հոգալ մեր առօրյա հոգսերը», – ասում է Ա.Զիրոյանը: Զրի խնդիրը պարզաբանելու եւ պատճառը հիմնովին հասկանալու համար գրուցեցինք նաեւ

Արծվանիկի գյուղապետ Անուշավան Հարությունյանի հետ, ում ավելի շատ հետաքրքրում էր ծերանոցի շենքի ճակատագիրը, որը մի քիչ էլ տարօրինակ էր ստեղծված վիճակում: «Գյուղը հիվանդանոց չունի, հսկայական շենքն ամբողջովին տրամադրել են «Առաքելություն Հայաստան» կլն-ն, որը սպասարկում է ընդամենը 10 շահառուի: Թե՛ ջրի, թե՛ ծերանոցի հետ կապված մյուս հարցերը պետք է լուծի համապատասխան հի-ն, քանի որ տարեցների սպասարկման կենտրոնի պատասխանատուն ինքն է», – ասում է Ա.Հարությունյանը: 2000թ., երբ շենքում դեռ հոգեբուժարանն էր, նոր ջրագիծ էին կառուցել: Ջուրը վերցնում էին Կրմեն կոչվող աղբյուրից: Գյուղացիների խոսքով՝ տարիներով հոգեբուժարանը ջրի խնդիր չի ունեցել, վթարներ էին լինում: Գյուղացիներն էլ պատճառաբանում է, որ նոր ջրագիծը ջրի ուժեղ ճնշմանը չի դիմացել, եւ վթարներ են առաջացել: «Բազմաթիվ անգամ մասնագետներ են տարել վթարի վայր, ամուրներ (ծօծ) ենք տեղադրել, բայց այդ տարբերակով հարցը չի լուծվել: Լիարժեք լուծում ստանալու համար գումարներ են անհրաժեշտ, որով առաջնահերթ պետք է մտահոգվեն ծերանոցի տերերը: Մայրաքաղաքում մտած մարդիկ («Առաքելություն Հայաստան» կլն-ի ղեկավարները) չեն կարող պատկերացնել, թե Արծվանիկ գյուղում ինչ է կատարվում, ինչ խնդիրների մասին է խոսքը», – ասում է Ա.Հարությունյանը:  
Գուցե ծերանոց ստեղծելուց առաջ նախ պետք էր մտածել առաջնային պայմանների մասին, քանի որ անկախ սեռից ու տարիքից, սո-

ցիալական դիրքից յուրաքանչյուր մարդ կարիք ունի սիրո եւ հոգատարության: Սակայն դրա կարիքն առավել շատ ունեն այն մարդիկ, ովքեր ճարահատյալ ապրում են ծերանոցում՝ կամ կորցրել են իրենց ընտանիքը, չունեն հարազատներ, միգրացիոն վիճակում են գտնվող կողմից: Այդքան հոգեկան ապրումներից հետո մարդը հայտնվում է մի տեղ, որտեղ նույնիսկ ջրի հարցը լուծված չէ: Տարիներ են անցնում, բայց ոչ որ չի անհանգստանում, քայլեր չեն ձեռնարկում հարցին վերջնական լուծում տալու համար: Սյունիքի մարզպետարանում նույնիսկ տեղյակ չեն, որ արդեն երկու տարի է, ինչ «Արծվաբույն» կենտրոնում ջրի խնդիր կա: Հնարավոր է, որ դրա մեղավորն Արմենուհի Զիրոյանն է, ով այդ խնդրի մասին տեղեկացրել է միայն Արծվանիկի գյուղապետին՝ մտածելով, որ գյուղի հետ կապված խնդիրների համար պետք է նրան դիմել: Գյուղապետն էլ նշում է, որ նա մակ է գրել մարզպետին՝ հարցը լուծելու համար: Մարզպետարանի սոցիալական բաժնի պետ Արամ Շահնազարյանն էլ ասում է, որ այդ հարցը մարզպետարանին չի վերաբերում: «Ծերանոցում առկա ջրի խնդրով հետաքրքրվել են որպես կապանցի, այլ ոչ որպես սոցիալական բաժնի պետ, որովհետեւ դա սոցիալական բաժնի պետի գործառնությունն է: Չէ՛, մտնում: Այդ հարցով պետք է զբաղվեն «Առաքելություն Հայաստան» կլն-ի ղեկավարները, որովհետեւ այդ կլն-ն է ծերանոցի հիմնադիրը: Եթե ծերերի խնամքի կենտրոնը լինի 33 աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ, ապա շատ ավելի լավ կլինի, համապատասխան ֆինանսավորում կստանան եւ կկարողանան լուծել բոլոր ծագած խնդիրները», – ասում է Ա.Շահնազարյանը: Սոցիալական բաժնի պետը նշում է նաեւ, որ ծե-

# Շրջագայություն հայաստանյան ուրբ մարզում

## ԳՊՐՈՏԱԿԱՆ ԱՍՏՈՒ

Հրաշեկ ամառն է թագավորում հայոց հիմնավորը աշխարհում: Բնությունը ողջ շրջապայումս ի ցույց է դնում բոլոր հրաշքերը: Աստու ստեղծած էակները փութաջանորեն ըմբռնվում են ամառը՝ անհագորեն լցնելով շտեմարանները հոգեւոր եւ նյութական բարիքներով:  
Ամառային արձակուրդը հիշարժան եւ բովանդակալից դարձնելու համար հետաքրքիր նախաձեռնություններով են հանդես եկել Քաջարանի քաղաքապետարանը եւ թիվ 1 դպրոցի տնօրինությունը:  
Արդեն ավանդույթ է դարձել շրջագայությունը հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս: Անցած տարիներին դպրոցի տնօրեն Լ.Մարգարյանի ղեկավարությամբ դպրոցի մի խումբ ուսուցիչներ մեկնել են Արցախ, եղել Փամծասարում, Շուշիում, շրջել Ստեփանակերտում, Տաթևի վանքում:  
Այս տարի շրջագայության աշխարհագրական քարտեզն ավելի լայնածավալ էր:  
...Արեւը դեռ չէր ծագել, երբ մեր խումբը ճանապարհ ընկավ: Հարմարավետ ավտոբուսը, որ տրամադրել էր «ՁՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանը, առաջ էր ընթանում, եւ մեր առջեւ հերթով բացվում էին հայրենի երկրի ծանր ու անհանրոք գոյություն ունեցող շտեմարանները: Ծանապարհի անցումն էր Սյունյաց ջբմաղ աշխարհի բյուրավոր ոլորաններով, լեռնանցքներով, Շարունակությունը՝ էջ 12

**ՋԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**  
համագործակցության կողմից  
Տեսնո՞ւմ եք, ծերանոցում խմելու ջուր չկա, այնտեղ ապրողների համար ջուրը մերձակայքից են բերում, հաճախ դուրսբերվում: Եվ այսպես՝ երկու տարի շարունակ: Իսկ ահա բոլոր պաշտոնյաները՝ խնդրի հետ շատ թե քիչ առնչություն ունեցող, «հիմնավոր» պատճառներ ունեն՝ իրենց անտարբերությունն արդարացնելու համար: Այսպես էլ ապրում ենք, այսպես էլ կառավարում ենք, այսպես էլ իշխում ենք... Երանի թե լինեք մեկը, ում կկարողանայիք դիմել՝ հարցը լուծելու ակնկալիքով: ■

# Քաղաքապետ, թե՛ ...

## ԵՐԲ ԳԱԼԻՍ Է ՍԵՊՏԵՄԲԵՐԸ



### ՇՅՈՐՍ ԴՎՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, «Համո Սահյան ԳՄԿ» 34 նախագահ

**Սիսիանի քաղաքապետ Ադասի Հակոբջանյանը՝ մինչ այդ ինձ անհայտ մայրաքաղաքային թերթերից մեկում տպագրել է մի գրադարձագիր, որտեղ շարադրել է բազմաթիվ անհեթեթություններ, անստույգ փաստեր եւ անհիմն դատաբանություններ:**

Կարող եմ չպատասխանել այդ պատկերահարկող հորինվածքին՝ ղեկավարվելով մեծ պոետի հանրահայտ թեւավոր արտահայտությամբ, սակայն երբ ամբարտավանությունն եւ անբարոյականությունն անցնում են սահմանները, պետք է հակահարված ստանան:

Այդ հոդվածը կոչվածը նախ ցույց է տալիս, որ նորաթուխ «գործիչը»

փոխանակ տեր կանգնի իր գործին, հմտանա քաղաքաշինության ասպարեզում, կարողացել է երկու-երեք տարում հմտանալ բանասիրական գիտություններ ու զարգախոսություններ հորինելու մեջ:

Այսպես: Ընտրելով իր թերություններն ու ապօրինի արարքներն ուրիշների վրա բարդելու մանկամիտ տարբերակը՝ գրում է, թե Սիսիան քաղաքն անկում էր ապրում դեռ Շ.Դավթյանի ղեկավարած տարիներին: Գրում է եւ չի հիմնավորում, թե այդ անկումն ինչով է արտահայտված: Այսինքն՝ 30 տարի առաջ Սիսիանի աննախադեպ զարգացումը տնտեսական եւ հոգեւոր ասպարեզներում համարում է անկում, իսկ կեղտի, փոշու մեջ կորած, աղբակույտերի եւ փլատակների վերածված քաղաքը համարում է զարգացման ճանապարհին կանգնած բնակավայր: Գրում է, թե այն ժամանակ, այսինքն՝ 30 տարի առաջ, քաղաքի ասֆալտապատումն անորակ է կատարվել, որի պատճառով այսօր քայքայվում է: Այսպիսի «հանճարեղ» եզրակացություններ ամբողջ հետո գրում է, որ Սիսիանում չկա այն տարիներին կառուցված ճարտարապետական դիմագիծ ունեցող որեւէ օբյեկտ: Զգիտես ինչ անուն տալ սրան: Կույր պիտի լինել չտեսնելու ոչ միայն հանրապետությունում նմանը չունեցող ջրային հայելիները, այլ նաեւ հացի թանգարանը, տրիկոտաժի ֆաբրիկան (որն, ի դեպ, իր եղբոր կողմից սեփականացվել է, թալանվել է վերածվել փլատակների): Այդ տարիներին Սիսիանում կառուցվել են հարյուրավոր առանձնատներ եւ 100 հազար քմ բնակելի տարածություն: Իսկ հիմա քաղաքում հարյուրավոր առանձնատներ մնացել են կիսատ եւ զանազախոռոչների մեծ մասում են Ադասի Հակոբջանյանի

երեսին:

Զանդրադառնալով այն գրադարձագրերին, թե Համո Սահյանի միջոցով եմ պաշտոններ զբաղեցրել եւ գիտական աստիճաններ ստացել, կանգ առնեմ իր գրադարձագրի՝ Համո Սահյանին վերաբերող հատվածին: Գրում է, թե «մինչև վերջերս Սահյան սիսիանցին ոչնչով արժեւորված, կարեւորված չէր»: Պարզվում է, որ Սիսիանի մշակույթի տան պատին մի ցուցանակ կայացել է հուշարձանին ծաղիկներ դնելով՝ ինքը լրացրել է այդ բացը: Ուղղակի ծիծաղելի է: Այդ քաղաքապետը, ով իր հոդվածում ինչ-որ անհեթեթություններ է փորձում հիշեցնել, անտեղյակ է, որ գոյություն ունի «Համո Սահյան գիտամշակութային կենտրոն», որի կատարած հսկայական աշխատանքներից մեկն է մի քանիսը.

### 1. Գրադարձագրության ասպարեզում.

Հրատարակվել են ավելի շատ գրքեր, քան բանաստեղծի կենդանության օրոք: Երկու հատընտիր, «60 եւ 1 հայրեն», «Ինչ էլ լինի կգամ» (հայերեն, ռուսերեն), Ս.Եսենինից թարգմանությունները, «Դադի ծաղիկ», «Ինձ բացակա չդնեք» ժողովածուները (վերջինս ունեցել է չորս հրատարակություն): Վեց մեծագրություն (Դավիթ Գասպարյան, Արմեն Դավակիմյան, Նաիրա Խաչատրյան, Շիրազ Դավթյան-3): Այս տարի հրատարակվել է երկերի քառասուոր ժողովածուի առաջին գիրքը, «Համո Սահյան. հանրագիտարան» եւ «Համո Սահյան. ձեռագիր մատուցներ» ինքնատիպ ժողովածու:

### 2. Բանաստեղծի հիշատակի հավերժացման ասպարեզում.

Հիմնվել է «Համո Սահյան» ոսկե հուշամեդալ, հուշատախտակներ են փակցվել Երեւանի Կասյան 3 շենքին եւ Սիսիանի առանձնատանը (քան

դակագործներ Գ.Բաղդասարյան եւ Ա.Շիրազ): Նկարահանվել են չորս տեսաֆիլմ (ռեժիսորներ Զ.Կաժոյան, Յ.Պապիկյան, Ժ.Վարդյան), տեսա - եւ ձայնասկավառակներ, հավաքվել է 600 լուսանկար, նուրբացվել են բանաստեղծի տողերով գրված երգերը, պաշտպանվել են դոկտորական եւ թեկնածուական թեզեր, գրվել են հարյուրավոր հոդվածներ, կազմակերպվել են մի քանի տասնյակ հեռուստահաղորդումներ եւ այլն:

Այսպեւն ընթերցողի համար եւ ոչ թե Ադասի Հակոբջանյանի, որը չի տեսել, չի կարդացել այսքանից գոնե մեկը, այլապես տուրք չէր տա իր հիվանդ երեւակայությանը, թե Սահյանը չի արժեւորվել եւ չէր ավելացնի, թե «Սահյանը մեռավ ծայրահեղ աղքատության մեջ, միայնակ, սոված, նեղացած աշխարհից ու Ձեզանից»:

Ո՞վ է իրավունք տվել գրադարձագրի նման տողեր գրել մեծ բանաստեղծի հասցեին: Ինչո՞ւ պիտի նա աղքատության մեջ լիներ կամ սոված ու միայնակ, երբ հսկայական վաստակ ուներ, կին, երկու արու զավակ եւ բազմաթիվ բարեկամներ ու ընկերներ: Ինչո՞ւ է վիրավորում նրանց, ովքեր մինչեւ բանաստեղծի կյանքի վերջին րոպե կանգնած են եղել նրա սնարի մոտ: Ի դեպ, այս փաստի հետ կապված Սահյանի որդին՝ իրավաբան, բանաստեղծ Նաիրի Սահյանը քաղաքապետին դատի տալու հայց է ներկայացրել:

Այսքանից հետո մտածում ես, թե այսպիսի մտածողության եւ անհեղինակ տեղեկության տեր անձնավորությունն ինչպես է հանգիստ խղճով մտածում աթոռին, որին, ի դեպ, այնքան է կառչած, որ կորցնելու վախից մոռանում է ամեն պրոբլեմ:

Զգիտեմ, թե ում ձեռքով է թխվել այդ թթմաբուր հոդվածը, որովհետեւ Ադասի Հակոբջանյանը ոչ միայն գրելու, այլ նույնիսկ բանավոր արտահայտելու ունակություն չունի: Սակայն նրանց եւ ամեն մի բանասիրության բերանը փակելու համար ստիպված են բերել երկու

օրինակ, իմ ղեկավարած տարիների «անկման» եւ Համո Սահյանին «մոռանալու» մասին:

- *Երկար տարիներ ղեկավարելով Սիսիանի տարածաշրջանը, Պուրբ բոլորանվեր սիրով ծառայել եք մեր երկրի հարավային շրջանների շենացմանն ու զարգացմանը: Ձեր անվան հետ եմ կապված այդ տարիներին իրագործված բազմաթիվ նախաձեռնություններ, որոնք նպաստել են Սիսիանում եւ հարակից բնակավայրերում տնտեսական, մշակութային կյանքի զարգացմանը, մեր ժողովրդի բարօրությանը:*

... *Գովարժան եմ Ձեր ջանքերը նաեւ տաղանդաշատ բանաստեղծ Համո Սահյանի գրական վաստակի արժեւորման գործում, որը շարունակում եք անվազ նախաձեռնություններով՝ հրատարակության պատրաստելով նրա ստեղծագործությունները եւ հեղինակելով մեծ Վարդեստին նվիրված ուսումնասիրություններ:*

### Գարեգին Բ

#### Ամենայն հայոց կաթողիկոս

#### 2009թ., մարտի 9-ի կոնդակից

Համո Սահյանին «մոռանալու» մասին.

- *Հայ գրականության, մասնավորապես սահյանագիտության բնագավառում ունեցած վաստակի, ակտիվ գործունեության եւ ներդրած ավանդի համար Շիրազ Դավթյանին պարգևատրել շնորհակալագրով:*

#### Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյան 21.06.2004թ.

Ոչինչ չունեմ ավելացնելու, որովհետեւ ազգի հոգեւոր հովիվը եւ կառավարության ղեկավարն այսպիսի գնահատականներ են տալիս, իսկ ինքնասիրակարծի քաղաքապետն իր աթոռը չկորցնելու համար նույն մարդու հանդեպ համոզեւ է գալիս բանասիրությամբ:

# Շրջագայություն հայաստանյան ութ մարզում

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՍՈՒ

Սկզբը՝ էջ 11

խոր կիրճերով ու դարավանդներով, արտավայրերով ու եղեմների անտառներով: Առաջին կանգառը կապուտաշյա Սեւանի ափին էր: Ծփում էր Սեւանը բազմագույն ալեբախումներով: Հայոց աշխարհին բնորոշ բնությունը գերում էր մեզ ողջ շքեղությամբ: Հաջորդը՝ Դիլիջանն էր: Երեկոյան հասանք Վանաձոր: «Արգիշտի» հյուրանոցում գիշերելուց հետո, արեւածագին ճանապարհվեցինք Դսեղ: Օդը զով էր: Արեւը համեմատաբար շոյում էր մեր հիացած աչքերը: Անցանք Լոռու ձորը եւ ակամայից սկսեցինք արտասանել մեծ բանաստեղծի «Լոռեցի Սաքուն» պոեմի տողերը.

«Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց Ժայռերը՝ խորունկ նորթը կիսած՝ Դեն ու դեմ կանգնած համառ ու անջարթ»

Հայացրով իրար նայում են հանդարտ: Դեբեդի կիրճից ոլորապտույտ ճանապարհով բարձրացանք դեպի ժայռերի գլուխը: Այստեղ՝ հարթավայրի վրա, փռված է Ամենայն Հայոց Բանաստեղծի ծննդավայրը՝ Դսեղը: Հեռվում երեւում են Քաջաքարը, Լավարը, Զաթիղաղը, Դիդ լեռը, որը տիրաբար հսկում է շրջակայքը: Զբնաղ է բանաստեղծի ծննդավայրի բնությունը:

Առաջինը, որ մեզ հյուրընկալեց, մեծագույն գրողի անունը կրող

դպրոցն էր: Գեղեցիկ վերանորոգված, կահավորված, անվանը հարիր կառույց է: Դպրոցի տնօրենը՝ պարոն Շեկոյանը մեզ ուղեկցեց կրթօջախ: Շրջեցինք դասասենյակներով, միջանցքներով:

Աննկարագրելի գեղեցիկ բնություն ունի Դսեղը, մի կողմում խիտ անտառներ են, մյուս կողմում խոր խոր ձորեր ու բարձր լեռներ: «Մեր գյուղն էն է, որ հարար Լեռների մեջ միգապար Խոր ձորերի քարափին՝ Ձեռք քրված ճակարին՝ Միտք է անում քրքրաղեն: Ինչ է ուզում՝ ջրգիրեն...»:

Արտասանում էինք մեք մեկ այլ ոգեւորությամբ:

Հետո ուղեւորվեցինք մեծանուն բանաստեղծի հայրական օջախը: Տան առջեւ պարտեզ է, որտեղ տեղադրված է Թումանյանի կիսանդրին: Կողքին մի գեղեցիկ մատուռ է, ուր հանգրվանում է բանաստեղծի սիրտը:

Ստանք տուն-թանգարան, որը երկհարկանի կառույց է: Ակնածանրով մտանք առաջին հարկում գտնվող հացատունը: Այստեղ ամեն ինչ հիշեցնում է Թումանյանական ժամանակաշրջանի կենցաղը: Հերթով մտանք «մեծ օթախը», «դոնախի օթախը» (հյուրասենյակ): Թումանյանաբույր պատերի մեջ նրա շունչն էր, նրա ոգին: Աստվածային երանությամբ ու անհանգ հետաքրքրությամբ ուսումնասիրում էինք ու



զգուշությամբ զննում այն մատուցները, որոնք երբեւէ չոչափել է մեծն լռեցին: Հողածածկ, կավե հատակ, կենցաղային իրերը պատմում են գյուղական առօրյայի մասին: Թախտի վրա դրված օրորոցում մայրը մեծացրել է իր ութ երեխաներին: Սենյակից սենյակ անցնելով դիտեցինք մոտ 300 մեծարժեք ցուցանմուշներ, որոնք ներկայացնում են մեծագույն գրողի կյանքն ու գործունեությունը: Պահպանված են նրա անձնական իրերը, գրքերը, պահարանները, ձեռագրերը, նամակները: Բարձրացանք երկրորդ հարկ: Սենյակ տանող դռան ձախ կողմում հաստ գետնի վրա ընկերների հետ նստում, հեթաթներ էր պատմում: Այդ մասին գրել է «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքում: Սենյակում բանաստեղծի հագուստն

է պահպանված, ձեռագրերը: Պատից կախված են Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթևի դիմանկարները: Պատերի ներսում նրա ստեղծագործությունների հերոսների նկարներն են՝ Գիթորը, Համբոն, Անուշը, Լոռեցի Սաքուն: Լինելով տուն-թանգարանում, ճանաչելով Թումանյանի ոգեշնչման աղբյուրները, ավելի խորությամբ ես պատկերացնում նրա գրվածքների շարժառիթները:

Այս տանը է ծնվել ու ապրել մեծ բանաստեղծը: Այստեղ է անցկացրել իր մանկությունն ու պատանեկությունը: Իր մանկության օրրանի մասին գրել է. «Իմ մանկությունն անց է կացել մի աստվածային շառյուղյան մեջ: Լոռվա գեղեցիկ բնությունը, անմահական օդը, զրնգան աղբյուրների ջուրը, լեռնական գյուղական կյանքի ազատությունը»:

Հայրենի գեղեցիկ բնությունը, մարդիկ, գյուղական առօրյան կաթիլ առ կաթիլ սնել են նրա միտքը, հոգին, սիրտը:

Այդտեղից ճանապարհվեցինք դեպի Թումանյանի սիրած վայրերից մեկը, որը բանաստեղծը անվանել է «Ծովեր»: Դա նույնպես բնության հրաշալիքներից մեկն է, գողտրիկ մի անկյուն, գյուղից քիչ հեռու: Հարթավայրի կենտրոնում մի փոքրիկ լճակ կա, որի մասին Թումանյանն ասել է,

որ այն չի փոխի աշխարհի ծովերի հետ:

Զորս կողմից շրջապատված անտառածածկ լեռներով՝ լինը նմանվում է աստվածային հայելու, որն անդրադարձնում է երկինքն ու երկիրը: Որքան խորն էր կապված իր հայրենիքին ու ժողովրդին, այնքան նրա սիրտը ավելի էր լցվում ցավով՝ տեսնելով ժողովրդի վիճակը: Նա ցավով գրում է.

«Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում, Յավոթ սրբով աշխարհ լցվեց մեր դարում, Յավոթ աշխարհքն եկավ լցվեց բովանդակ, Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում»:

Սիրելի բանաստեղծի մասին խորախորհուրդ մտորումներով հրաժեշտ տվինք նրա ծննդավայրին եւ բռնեցինք տունդարձի ճանապարհը այլ ուղղությունով՝ Վանաձոր, Սպիտակ, Ապարան, Աշտարակ ...

Հաջորդ հրաշքը տառերի պարտեզն էր: Բաց երկնքի տակ որպես վեր են խոյանում հայոց մեծերի ու տառերի քարաթմբաները: Հիացանք այդ հսկաներով, որոնք հսկում էին հայոց աշխարհն իրենց հավերժական տիրական կեցվածքով: Մարդն անգոր է բնությունն իրեն ենթարկելու, բայց կարող է հրաշագործ ձեռքերով հարստացնել եւ վերախմաստավորել այն ...

Մանկավարժներին եռօրյա հանգիստը եւ շրջագայությունը ութ մարզով երկաթ ու երանությամբ կիռչվի:

**ՍՆԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
**Քաջարանի N1 միջնակարգ դպրոցի դասվար**



Մեխանիզատոր Արամ Միջայեւյանը (հտորից)՝ բերքահավաքի ժամանակ:

# Գների աննախադեպ թռիչք՝ գյուղում

Սիսիանի եւ Գորիսի գյուղերում կերի կուտակման ու բերքահավաքի լարված օրեր են

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սկզբը՝ էջ 2

լի են համարում: Գագիկ Գալստյանն այդ օրը «Բելոռուս» մակնիշի տրակտորով խոտ էր հնձում թեք եւ քարոտ մի դաշտամասում: Մեխանիզատորի օգնությամբ սպասող գյուղացիներից մեկը՝ Բաղդասար Գրիգորյանին շատ բարձր գնահատեց Գագիկի աշխատանքը՝ «Անզուգական մասնագետ է, բայց եւ անկրկնելի մարդ է, ամենադժվար գործն անգամ հեշտությամբ ու հաճույքով ենք նրա հետ կատարում: Մեծարեք, փառաբանեք նրան. այսօրվա գյուղը հենց այդպիսի մարդկանց վրա է հենված»:

Գյուղի ընթացիկ դրությունը բարդացրել է նաեւ այն հանգամանքով, որ հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը հիմնականում շատ ցածր է: Խոտ գյուղի բնակիչ Դավիթ Սկրտչյանը, ում հանդիպեցինք գարու արտի մոտ՝ բերքը հավաքելիս, դժգոհ

էր դաշտի վիճակից՝ «Հագիվ 5ց բերք կստանամ այս դաշտից, որը չի ծածկի կատարված ծախսի 50%-ն անգամ»:

Հացահատիկային մշակաբույսերի համար, հատկապես այդ գոտու գյուղերում, տարին անբարենպաստ է եղել: Ծուղակի մեջ են հայտնվել մասնավորապես այն ֆերմերները, ովքեր աշնանը ռուսական սերմացու են ստացել («Էլիտա»)՝ մեկ միավորի դիմաց առաջին վերարտադրության երկու միավոր սերմացու վերադարձնելու պայմանով (կամ՝ դրամով՝ 1 կիլոգրամը 350 դրամ): Եկել է ժամանակը, որ ֆերմերները վերադարձնեն աշնանը ստացածի կրկնակին, բայց անհաջող արդյունք են ունեցել՝ եղանակային պայմաններից ելնելով, եւ կանգնել են խնդրի առջև: Ֆերմերները հետո են միայն հասկացել, որ կնքված պայմանագրերում «Ֆորս մաժորային» իրավիճակ չի նախատեսվել: Այնպես որ՝ անբարենպաստ տարվա բեռը գյուղացին պետք է վերցնի իր վրա: Այդ հարցն այնքան կարեւոր

է, որ մոլորված ֆերմերները պատրաստվում են նամակ հղել ՀՀ նախագահին՝ խնդրելով նրա միջամտությունը: Հակառակ ֆերմերների, Սամվել Թանգյանն այդ խնդիրն անլուծելի է համարում. «Անցյալ տարի էլ նման վիճակ է եղել, բայց որեւէ զիջում չի արվել: Վիճակն էլ այնքան լուրջ չէ, որքան ֆերմերներն են ներկայացնում: Հունիսին կառավարական հանձնաժողով է ժամանել մարզ. գոհ է եղել տրված սերմացուներով ցանված դաշտերից: Խնդիրն առնչվում է մոտ 100հա դաշտամասի, որի համար, ցավոք, զիջում չի լինի: Եվ ֆերմերները պետք է ժամանակին վերադարձնեն (կամ դրամով փոխհատուցեն) ստացածի կրկնակին»:

Մեր փոքրիկ շրջագայությունը Գորիսի շրջանի մի քանի գյուղերում կրկին հաստատեց իրողությունը, որ՝ ա) գյուղացին շարունակում է մնալ մենակ իր խնդիրների հետ, բ) դիզվառելիքի հայաստանյան շուկայում շարունակվում է կամայականության շքերթը, գ) գյուղնախարարություն կոչված «օֆիսը» որեւէ կապ չունի մարզի գյուղատնտեսության հետ:

ՍԱՄՎԵԼ ԹԱՆԳՅԱՆ



Շինուհայրի դաշտում մեխանիզատոր Նորայր Արամյանը ծղոլ է մամլում:

# Հարաբերությունները խորանում են

Ֆրանսիայի Մոնտելիմար քաղաքի պատվիրակությունը հուլիսի 21-23-ը գտնվում էր քույր քաղաք Սիսիանում

## ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔԵՐ

Այս տարվա մարտ ամսից Սիսիանի նախակրթարաններում ժամեր են հատկացված ֆրանսերենի դասավանդման համար: N4 մանկապարտեզի փոքրիկները ֆրանսերենով ողջունում են աշխատանքային այցով Սիսիան ժամանած ֆրանսիայի Մոնտելիմար քաղաքի 9 հոգանոց պատվիրակությանը:

Մոնտելիմարի հետ քույր քաղաքի հուշագիր Սիսիանը ստորագրել է 2011թ. դեկտեմբեր ամսին՝ տեղում գործող «Հայկական մշակույթ» եւ պատմական հիշողություն» ասոցիացիայի նախաձեռնությամբ:

Քույր քաղաքի պատվիրակության կազմում առողջապահության, մշակույթի եւ այլ ոլորտների ներկայացուցիչների ընդգրկումը նպատակ ուներ մոտիկից ծանոթանալ հատկապես մշակույթի ոլորտներին, ուրվագծել հետագա անելիքները:

«Այն հարաբերությունները, որ սկիզբ դրվեցին Մոնտելիմար եւ Սիսիան քաղաքների միջեւ, արդեն ամուր հիմքերի վրա են: Այս այցելությունից հետո կատարվող մի ճորհարակով մի ճորհարակով կամրազրվեն քույր քաղաքների միջեւ համագործակցության կոնկրետ ոլորտները: Այն, որ Սիսիանում մեզ ջերմ հյուրասիրության արժանացրին, չեն կարող ժխտել, նույնքան անժխտելի է փաստը, որ այստեղ անկեղծորեն ցանկանում են փորձի փոխանակման ճանապարհով քայլ կատարել դեպի առաջ», - նշում է Մոնտելիմարի քաղաքապետարանի «Քույր քաղաքներ» կոմիտեի նախագահ ժան Կլոդ Ումբերը:

Վերջինիս եւ Սիսիանի քաղաքապետ Ալասի Հակոբջանյանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն առաջին իսկ հնարավորության դեպքում Սիսիան կիրավորվեն Մոնտելիմարի հետ քույր քաղաքի հուշագիր ստորագրած մյուս 7 քաղաքների պատվիրակները եւս, տեղում կկազմակերպվի սիմպոզիում: «Իմ այս առաջարկը մեծ ոգեւորությամբ ընդունեց ժան Կլոդ Ումբերը: Սա կլինի այն կարճ ճանապարհը, որով կավելանա Սիսիանի հետ բարեկամ քաղաքների թիվը», - ասաց Սիսիանի քաղաքապետը:

Սիսիանի նախակրթարաններում, արվեստի եւ մշակույթի օջախներում, առողջապահական հաստատությունում տեսածն ու արձանագրածը պատվիրակության անդամները կքննարկեն Մոնտելիմար հասնելուն պես:

Մոնտելիմարի փոխքաղաքապետ Ֆրանսուազա Սկաթնալը Սիսիանում էր մասնագիտությամբ բժիշկ անուսուր՝ Սլա Թեբբի հետ: Սիսիանի բժշկական կենտրոն այցելելուց հետո պարոն Թեբբիը խոստացավ իր անձնական միջոցներից ժամանակակից ռենտգեն սարքավորումներ տրամադրել բուժաստանությանը: Մոնտելիմարի քաղաքապետարանի «Քույր քաղաքներ» կոմիտեի փոխնախագահ Սլա Թեբբիը պատրաս-

տակամություն հայտնեց տեղի բժիշկներին վերապատրաստելու նպատակով իր կլինիկայից համապատասխան մասնագետ գործուղել Սիսիան: «Կրթական, մշակութային օջախներ, բուժ-հաստատություն այցելելուց հետո մեզ համար պարզեցինք մի բան, որ բոլորն էլ պատրաստ են համագործակցության: Մեր այցի նպատակը հենց դա էր. շփվել մարդկանց հետ ու հասկանալ նրանց մտադրությունները: Եղան նաեւ գործնական մի շարք առաջարկներ», - ասաց Մոնտելիմարի փոխքաղաքապետ Ֆրանսուազա Սկաթնալը:

Կարելուվեց նաեւ դպրոցա-հասակ երեխաների, ինչու չէ, նաեւ ընտանիքների փոխանակման ծրագրի իրականացումը: Ֆրանսիական կողմը պատրաստակամություն հայտնեց արվեստի եւ մշակույթի ոլորտի մանկավարժների, բուժաշխատողների փորձի փոխանակում իրականացնել Մոնտելիմարում: «Կարելու է այն է, որ Մեմտելիմարի մեր բարեկամները մշակութային ոլորտի աջակցությունից գտա պատրաստակամ են նաեւ տնտեսապես մեցուկ լինել մեզ», - նշեց Ալասի Հակոբջանյանը:

Մոնտելիմարի կոնսերվատորիայի տնօրեն Ժերմ Կատանը՝ լինելով քաղաքի մշակութային օջախներում, նկատել է, որ այստեղ երաժշտական գործիքների վերանորոգման ու պահպանման լուրջ խնդիր կա:

Ֆրանսիացի բարեկամներն այցելեցին Շաքեի ջրվեժ, Ջորաք քարեր, Ուրուտի տաք ջուր, այցելեցին Դարբասի Սուրբ Ստեփանոս եկեղեցի, Անգեղակոթի Վարդան գորավար մատուռ, հիացան Տաթեի վանական համալիրով: Ազգությամբ հայ Ֆանետա Յալաստանուն առաջին անգամ է: Հայրենի հողի ջերմությունից եւ մարդկանց անկեղծությունից է տպավորված: Սինջ Հայաստան գալը պատկերացումները սեփական ժողովրդի, նրա հյուրասիրության, ջերմության, անկեղծության մասին այլ էին: «Ինձ դուր եկավ բնությունը, մարդիկ էլ իրենց շրջապատող բնաշխարհի պես խորն են ու իմաստուն: Հիմա առավել քան երբեւէ ինձ համար կարեւոր է Ֆրանսիայում պահպանել հայի դիմագիծը: Վստահ եմ՝ զգացողություններն ստիպելու են ինձ կրկին վերադառնալ այստեղ», - նշում է Ֆանետա Ստեփանյանը:

Այցի արդյունքներն ամփոփվեցին Սիսիանի քաղաքապետի հետ: Հստակեցվեց, որ սեպտեմբերի կեսերին Սիսիան կայցելի Մանտելիմարի քաղաքապետ Ֆրանկ Ռեյների գլխավորած պատվիրակությունը:

Քույր քաղաքի հրավերով Սիսիանի պատվիրակությունը Մոնտելիմար կմեկնի 2013թ. հունվարին: Արվեստագետ Աշոտ Ավագյանը եւս իրավեր ստացավ: Մոնտելիմարում կցուցադրվեն նրա ստեղծագործությունները:

Սիսիանի քաղաքապետը պատվիրակության անդամներին հուշանվերներ հանձնեց:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Սիսիան

# ՀՂԵՉԻ ՀԾՉԾՔ ԾՐԻ ԷձԾՁԾԾ Ա

## Մեր նախնիներն արվանսրներ են եղել



### ԿԱՐԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Շուշիի շրջվարչակազմի «Շուշի» պաշտոնաթերթի խմբագիր

Եթե մեկը ձեզ ասեր, որ «Սասնա ծռեր» էպոսի իրադարձությունների վաղեմությունն առավելագույնը 850-700 հազար տարեկան է, թե՛րեւս, առաջին իսկ պահից խորհուրդ տալիք դիմել հոգեբույժի: Բայց պարզվում է, որ մեր էպոսն իր մեջ գաղտնիքներ է պարունակում, որոնք, թող գարնանակի չթվա, նպաստում են քաղաքակրթության վաղնջական անցյալի վրա նոր լույս սփռելու ժամանակակից փորձերի արդյունավետությանը: Էպոսի՝ 1939 թվականին Մասնակ Արեւոյանի եւ Գեորգ Աբովի խմբագրությանը լույս տեսած համահավաք տեքստի՝ նոր լույսի տակ ընթերցումը ֆանտաստիկ եզրակացության է հանգեցնում: Մասնավորապես, եթե որոշ դրվագները ցուցաբերեն աշխարհում արդեն վաղուց ընդունված մտայնումը, կարելի կլինի ընդհուպ մերձեցնել էպոսի այն կրող ժողովրդի ինքնության վկայագրի՝ իրականում գլխավոր հերոսի՝ Փոքր Միտի առեղծվածի վերծանմանը:

Հաշվի առնելով հրապարակման հավակնություններն ու շուշի-վող նյութի բացառիկությունը, փորձենք մեր նախաբանով ընթերցողին նախապարտապետել նոր ժամանակների համար օբյեկտիվ դիրքորոշման: Գաղտնիք չէ, որ մարդկության նախասկզբի, ծագման, քաղաքակրթության զարգացման եւ նման մյուս՝ բազմաթիվ հարցերի վերաբերյալ աթեիզմն ու դարվինիզմ-օպարիկյան դոգմա-փիզիկ էրեկվա մեր մրավորականության համար ստեղծել են այլընտրանք չհանդուրժող հայեցակարգային համակարգ: Միևնույն Արեւմուտքում լիբերալ մտայնումը չի դադարել հեղափոխությունների համար: Գաղտնիք չէ, որ մարդկության նախասկզբնական փուլերի իրողությունն արդեն փաստ է շարժերի համար: Համենայն դեպս, իրերի ընթացքը դրան է հանգեցնում:

Այն, որ վաղնջական ժամանակներից մեզ հասած լեգենդների, էպոսների, առասպելների, սագաների, աքսերի ու գրույցների կոնկրետ դրվագներում ուղղակի օբյեկտիվ իրականությունն ու կոնկրետ եղելություններ են, հայտնի է վաղուց եւ շատերին:

Ավելին, շատ դեպքերում գրական հուշարձանը պարզապես կոնկրետ եղելության եւ իրողության ուղղակի վերարտադրումն ու նկարագրումն է, պարզապես դրանք մեր օրերի համար խիստ անհասկանալի ու մշուշոտ են: Նկարագրող ակնհաստեպի համար իրադարձության (ինչպես, ասենք, Եգեկիել մարգարեի տեսածը) կամ երեւոյթի (ինչպես էին Մովսեսն ու քուրմը չարտուն գավազանը, որ օձ էր դառնում գետնին)՝ անընկալելիության չափ անհասկանալիությունն ու առեղծվածայնությունը գրավոր հիշատակության մեջ արտահայտվում են որպես, ասենք, աստվածային ուժերի դրսեւորում, քանզի չկար երեւոյթի բնորոշման համար անհրաժեշտ իմացական հիմք: Ու չէր էլ կարող լինել: Պարզապես մի դեպքում Եգեկիել մարգարեն գործ է ունեցել սովորական թռչող սարքի հետ (որը, ըստ ՆԱՍՍ-ի նախագծային բաժնիներից մեկի ղեկավար, «Սատուռն» 5-ի հեղինակ Յոզեֆ Բլումրիխի, ուղեծրում գտնվող մայր ճակի հետ մաքրային կապ պահպանող տիեզերանավ էր, որի հզորությունը, ըստ գիտնականի հաշվարկների՝ 70 000 ծիառ էր, քաշն էլ՝ 63 տոննա), մյուս դեպքում էլ Մովսեսն ու քուրմը տիրապետում էին գերհզոր հիպոսի, որ հրաշքեր կարող է անել: Մի օրինակ միայն: Վոլֆ Մեսինգն առանց թույլտվության մտավ Ստալինի կրեմլյան աշխատասենյակը: Պարզապես նա բոլորին «երեսացել» էր որպես Լավրենտի Բերիա...

### Երեկ

Յենրիխ Շլիմանը, ով ոչ պատմաբան էր եւ ոչ էլ հնագետ, «Ողիսականը» կարդաց ոչ որպես առասպել եւ ... հայտնաբերեց Տրոյան: Հայտնագործություն, որ շատ մեծագույն պատմաբանների ու հնագետների համար երազանքի պես բան էր, անգամ եթե պիտի հասարակ ասիստենտ լիներ: Ու դա միայն այն պատճառով, որ Շլիմանն անցյալի վերաբերյալ ինֆորմացիային վերաբերվել էր որպես օբյեկտիվ իրականության վերարտադրության: Սակայն մարդկության անցյալի վերաբերյալ բազմապիսի հիշատակությունների՝ իր յուրօրինակ վերլուծությամբ աշխարհը ցնցեց հատկապես գերմանացի ուսումնասիրող Էրիխ Ֆոն Դենիկենը, որի «Աստվածների մարտակառքը» գիրքն ավելի քան չորս տասնամյակ է հանգիստ չի տալիս ընթերցողներին: յուրաքանչյուրի համոզված եզրակացությունն է՝ վաղնջական ժամանակներում մարդկությունը շատ որոշակի կերպով շփումներ են առնչություններ է ունեցել քաղաքակրթական շատ ավելի բարձր մակարդակ ունեցող բնակիչների հետ (ուրիշ ի՞նչ կրտե բացատրես Պիրի Ռեյսի քարտեզի ֆենոմենը), որոնք ամենեւին էլ աստվածներ չէին դասական ընկալմամբ, ու մենք, հաստատ, միայնակ չենք տիեզերքում: Եթե, իհարկե, հրաժարվում ենք կաղապարներից եւ ստերեոտիպներից, որ ամբողջությամբ պայմանավորում են սուբյեկ-

տիվ դիրքորոշում: Սուբյեկտիվիզմ, որ ակնհաս է ու ինչ-որ չափով օբյեկտիվ՝ հաշվի առնելով ժամանակների առեղծվածայնությունը:

### Ինչ են այսօր ասում

Այսօր հրապարակի վրա եղած գրականության շնորհիվ որոշակիորեն ուրվագծվում է մարդկության վաղնջական անցյալի՝ թող որ դետալների առումով ամենեւին էլ ոչ այնքան ամբողջական պատկերը: Ամեն դեպքում՝ կարծես թե հաջողվում է եղածի բազայի վրա, հենվելով գիտության ներկայիս հնարավորությունների վրա, բավականին որոշակի երեւակել Ատլանտիդայի վերաբերյալ կոնկրետ պատկերացումներ:

### Եվ այսպես...

Ատլանտիդայի ժամանակներում երկնականաբար եղել է կարմիր՝ կապույտի փոխարեն, որովհետեւ երկրագնդի բեռներն այլ վայրերում են եղել: Երկնքում ուրիշ աստղեր էին վառվում: Բուսականությունն այլ էր: Շատ բույսեր էլ աճում էին ջրի տակ, ուր ատլանտների պլանտացիաներն էին, եւ որտեղ նրանք շատ ժամանակ էին անցկացնում, որպես երկ-



կենցաղներ (Նոբելյան դափնեկիր Կուրտ Վյուրտրիխը պնդում է, որ ջրից ենք դուրս եկել): Ու քանի որ նրանք կիսաջրային կենսակերպ ունեին, նրանք աչքերն էլ, լայն կրծքավանդակից ու հզոր վզից բացի, հարմարեցված էին ջրային կյանքին ու կարծիքը գերակշռող միջավայրին՝ աչքի վերեւի կոպը կենտրոնում էլուստի պես վերջավորություն ունեն: Նրանք մատների արանքում էլ առկա էին թաղանթներ (վկայություններ կան, որ Մեծ Բուդդայի մատների արանքում եւս թաղանթներ կային. դրանք առկա էին նաեւ Տիբեթյան Կալիդի լեգենդներում հիշատակված՝ աստերից իջած ոսկե նավից ելած կնոջ՝ Օրիանայի մատների արանքում, ով կյանք տվեց 70 երկրային որդիների ու նորից հետ վերադարձավ, դրանք առկա էին նաեւ Մուզար-Օհան-Օ-Պիկոնի՝ Արեգակի բանբեր՝ մարդկան մատների արանքում, որ ըստ հնագույն ասորական առասպելների, էլ նույն էր լուսաբացին Պարսից ծոցի ջրերից եւ սուզվում նորից արեւմուտին՝ մարդկանց սովորեցնելով ամեն ինչ):

Մեր համեմատությամբ ատլանտները խոշորամարմին են եղել՝ իսկական իսկաներ՝ 7-8 մետր: Իրար հետ «խոսում-հաղորդակցվում» էին գալար հիշեցնող թթով եւ շատ լայն դիպապոնոմով՝ ուլտրաձայններից մինչեւ ինֆրակարմիր ալիքներ (ի դեպ, հիշենք փղերին ու դեֆիններին, որոնք հաղորդակցվում են իրար հետ շատ մեծ տարածությունների վրա՝ դեֆինները՝ մինչեւ 1500կմ): Նրանք ունեին գարնանակի թռչող սարքեր (Վիման), բազմի որ կարողանում էին ազդել քարավիտացիայի ուժի վրա, չեզոքացնել նրա ազդեցությունը (Հիսուն ու Բուդդան քա-

լում էին ջրի վրայով): Իմիջիայլոց, արդեն հայտնի է, որ մեծ (Քեոփսի) բուրգը 78 հազ. տարի առաջ հենց այդ մեթոդով կառուցել են ատլանտների գիտելիքներին տիրապետող՝ հնագույն ժամանակների եգիպտացիները, որոնք հետ, բնականաբար, կապ չունեն ուշ շրջանի եգիպտացիները, որոնք Յերոզոտոսն անվանում էր «արեւելյան եթովպացիներ»:

Ատլանտների մոտ գործում էր երրորդ աչքը, ինչի մասին վկայում է նաեւ էմբրիոլոգիան. ժամանակակից մարդու մոտ այն մնացել է որպես մակուղեղի ռուդիմենտ՝ թերաճ օրգան: Այն համարվում էր մարդու բիոէներգիայի աղբյուր եւ կարող էր մեր պատկերացումներով անհավանական բաներ անել՝ մեծ հեռավորությունների վրա մտքեր փոխանցել, քանզի երրորդ աչքը հնարավորություն էր տալիս հաղորդակցվել Համընդհանուր ինֆորմացիոն դաշտին: Ատլանտները տիրապետում էին նաեւ ուղղորդված հոգեկան էներգիային, տարածության վրա իրականացվող հիպոսիս, լայնորեն կիրառվում էր տելեպատիան:

Մի խոսքով, մեր նախորդների մոտ, շնորհիվ երրորդ աչքի, ճանաչողությունն ու ընկալունակությունը մոտենում էին կատարելության սահմաններին:

Բայց թեկուզեւ գտնվելով զարգացման շատ բարձր մակարդակի վրա, Ատլանտիդան գնացել է ինքնակործանման, քանի որ տեխնոկրատական զարգացումը հանգեցրել է ուժի գործադրմանը, ինչը դարձել է ճակատագրական (հեռուն գնալ պետք չէ. պատկերացնենք՝ ինչ կկատարվեր երկրագնդի հետ, եթե 20-րդ դարի 60-80-ականների՝ ԱՄՆ-ԽՍՀՄ դիմակայության՝ «Մառը պատերազմ» ժամանակ մի երկու, ասենք, ՄՄ եւ ՏՏ 20 միջուկային հրթիռներ պայթեին):

Եղել է մեծ աղետ. երկրագնդի առանցքը փոխվել է, փոխվել են նաեւ բեռները, հսկայական ջրային ալիքն անցել է մոլորակով մեկ՝ սրբելով-սանելով ամեն ինչ. երկրի ռեկոնստրուկցիոնալ փոփոխության է ենթարկվել, կազմավորվել են նոր ցամաքային տարածություններ:

Դա եղել է սրանից 850 հազար տարի առաջ. ու դա է հենց Աստվածաշնչյան ջրհեղեղը, որից հետո, մինչեւ մեզանից 700 հազար տարվա վաղեմության հասնող ժամանակները վերացել են ատլանտները (որ հիշատակված են նաեւ Մայա-կիչե հնդկացիների «Պուպլ Վուխ» էպոսում):

Երբ ջրերը մահանջել են, եւ ի հայտ են եկել նորմալ պայմաններ, ատլանտների մնացորդները շարունակել են ապրել երկրի վրա՝ մինչեւ մեր օրերը: 700 հազար տարվա վաղեմության ժամանակները: Այդ ընթացքում նրանցից ընձյուղվել է նոր ռասան՝ արիացիները, որոնք ներկայացնում են մեր օրերից մեզ:

Իսկ սրանից 11 հազար տարի առաջ Տիբեթի գիսաստղի՝ երկրագնդի հետ բախումից կործանվել Պլատոնի Ատլանտիդան՝ Ատլանտյան օվկիանոսում մնացած կղզին, որտեղ ապրում էին վերջին ատլանտները:

Բայց մարդկային քաղաքակրթությունը պետք է շարունակություն ունենար: Պիտի որ գլոբալ աղետների պարագայի համար լինել մի մեխանիզմ, որը հնարավորություն, գարանտ կլիներ քաղաքակրթության ապագայի անխախտ ընթացքի համար: Եվ պարզվում է, որ կա այդպիսի մեխանիզմ: Դա «Սոմատին» է: Պարզվում է, որ հնում եղել են մեծ անհատներ, ովքեր ինքնակազմակերպել են մարդկային ցեղի հարատեւության վեհ գործին: Իսկ ավելի կոնկրետ՝ հոգեւոր զարգացման բարձրագույն

աստիճան ունեցողները մտել են սոմատի (կամ՝ սոմադի) վիճակի մեջ՝ անմատչելի քարայրներում:

Այդ մասին, ի դեպ, իր «Ումի»-ն էր առաջացել («I o e i u i o e i o e i»). AEO-ADEB հրատարակչություն, Մոսկվա 1996թ.) գրքում պատմում է աշխարհահռչակ ռուս ակնաբույժ Էմմա Սուլդաշելը, որի գրքի նյութը ՄԱԿ-ի հովանու ներքո դեպի Տիբեթ կազմակերպված նրա արշավախմբի այցն էր:

Սոմատին մարմնի կոնսերվացման հատուկ մեխանիզմ է, որի դեպքում, ինչպես նշվում է, մարմինը կարող է պահպանվել տասնյակ, նույնիսկ հարյուր հազարավոր տարիներ, բայց եւ, այդուհանդերձ, կյանք վերադառնալ մի ինչ-որ ժամանակ (Նրանք սպասում են X ժամին, երբ կա մարդկության երկրորդ ոսկեդարը, ու մարդիկ նորից հաղորդակից կդառնան հնագույն գիտելիքներին):

Սոմատին գործի է դրվում օրգանիզմում առկա ջրի վրա՝ մեղի տացիայի ճանապարհով բիոդաշտի վրա բարեբար ազդեցությամբ, Բուդդայի կեցվածքով, ձեռքերը ծնկներին: Մարմինն անցնում է պինդ-քաղցած վիճակի, ընդամին, մնալով պիտանի հետագա կյանքի համար (այս մասին է վկայում նաեւ ամերիկացի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս Ռոբերտ Էթթինգհերն իր՝ 1965-ին լույս տեսած «Անմահության հեռանկարները» գրքում): Ընտրվում են հատուկ մաքուր վայրեր՝ նաեւ մանրէների վտանգից զերծ մնալու համար: Մարմնի ջերմաստիճանը մշտապես +4 է, որի դեպքում նյութափոխանակությունը հասնում է գրեթե 0-ի (շատ դանդաղ աճ կարող են տալ միայն եղունգներն ու մազերը): Նշենք իրենք, որ ակնատեսների վկայությամբ, այդպիսի ջերմաստիճան է նաեւ Քեոփսի եւ Թուրանահանդի դամբարաններում:

Հիբրալի, եթե ընդունում ենք, որ աշխարհը ղեկավարվում է Մեհի կամ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒԻ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԴԱՇԵՍԻ կողմից, ապա պետք է որ գլոբալ աղետների պարագայի համար անպայման նախատեսված լիներ մի ինչ-որ համամոլորակային մեխանիզմ, ինչը թույլ կտար երկրի վրա մարդկային կյանքի շարունակումը (մարդկային գործունից գատ, քաղաքակրթությունների անկման պատճառ կարող են դառնալ նաեւ տիեզերական աղետները, ինչպես, օրինակ, հսկա երկնաքարերը, ջրհեղեղները եւ այլն):

Ահա հենց այս մեծագույն նպատակի համար է ԱՄՍՏԻՆ, որ անվանվում է նաեւ մարդկության գենոֆոնդ: Դա մարդկության ինքնապահպանման վտանգից հակակշռող մեխանիզմ է, մարդկության հարստությունն ապահովող հնագույն եւ, իմիջիայլոց, քանիցս փորձարկված միջոց:

Սոմատին կարող է պահվել երեք վայրերում՝ ջրի տակ, սառույցներում եւ քարանձավներում, ընդ որում, երկրագնդի վրա ամենուրեք, բայց, գլխավորապես եւ հիմնականում՝ Տիբեթում ու Հիմալայներում, որտեղ եւ անհիշելի ժամանակներում եղել է երկրի բեռներներից մեկը:

Բայց եւ ինչպես վկայում է Նեպալյան համալսարանի պրոֆեսոր Շիվաբայայան. «Դուք երբեք չեք կարողանալ շոշափել Սոմատին, ձեռքով դիպել նրան, լուսանկարել նրա հետ ոչ միայն այն պատճառով, որ դա չի կարելի, այլեւ որ դա պարզապես հնարավոր չէ անել, ինչպես որ մաթեմատիկական հավասարման ստացված արդյունքը չես կարող շոշափել: ՆՐԱՆԵ պաշտպանված են»: Որովհետեւ խոսքը մարդկության մեծագույն սրբության, մարդկային մեծագույն միսիայի մասին է, որն ապահովում է անցյալի, ներկայի ու ապագայի անխախտ, երաշխավորված եւ հավերժական

# Կյանքը նրա առաջ պիտի որ դարաններ չունենար, բայց...

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

**2012թ. օգոստոսի 9-ին կյանքից հեռացավ Ռուբեն Ալեքսանյանը: Հողին հանձնեցին Շինուհայրում հարյուրավոր համազուգահեռներ և հանրապետության տարբեր վայրերից ժամանած հուղարկավորների մասնակցությամբ: Նա իր խաղաղ հանգրվանը գտավ վաղաժեռի մոր՝ Էլլայի մոտ, ում կորցրել էր 1958թ., երբ ինքը չորս տարեկան էր, և Լազր հոր մոտ:**



Ծնվել էր 1954 թվականին: Երկու տասնիկի՝ Գայանեի ու Հագարավարդի, իպա և տիկին Նորայի մայրագործով խնամքի ու հոգատարության շնորհիվ գրեթե զերծ մնաց անմայր մանկության դառնությունից: Գյուղի դպրոցն ավարտելուց հետո, մասնապետի ֆունկցիոնար կրթություն ստացավ Երևանում, ապա (1972-74թթ.) ծառայեց խորհրդային բանակում: Ջրուցարկվելուց հետո կրթությունը շարունակեց բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ Կիրովականում, այնուհետև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: Ջուզահեռաբար բետոնագործ էր աշխատում Տաթևի կողմում:

...Սյունիքի մարզում դարի կառույց համարվող Տաթևի կենտրոնավայր դարձած Շինուհայրը 1970-ականներին նոր վերելք էր ապրում: Այնտեղ կառուցվում էր միութենական մշակույթի գործարան՝ ռեստորան կոչված արտադրության համար (կովկասյան տարածաշրջանում՝ եգալի), որը գործարկվեց 1975թ. և տարիներ շարունակ ծանրակշիռ դեր խաղաց ոչ միայն այդ գյուղի, այլև ամբողջ շրջանի զարգացման, երիտասարդության արտագաղթը կանխելու, Գորիս քաղաքում բնակարանային խնդիրը մեղմելու գործում: Ռուբեն Ալեքսանյանը, գյուղի շատ երիտասարդների հետ, այնտեղ հայտնվեց դեռևս գործարանի կառուցման շրջանում: Ձեռնարկության գործարկումից հետո տարբեր աշխատանքներ կատարեց այնտեղ՝ բանվոր, նորմավորող, բրիգադավար, հերթափոխի պետ, կարի արտադրամասի ղեկավար: 1990թ. սեպտեմբերին կոլեկտիվի ընդհանուր ժողովը, տնօրենի թափուր տեղին հավակնող ու իր հոգևոր, նրան ընտրեց Շինուհայրի ռեստորանի կոնստրուկտորի պաշտոնը: Ձեռնարկությունը ղեկավարեց վեց տարի՝ այնտեղ ստեղծելով նոր և նորոգ միջավայր: Այդ ընթացքում երեւան եկան նրա կազմակերպչական, մասնագիտական ու

Սպարապետ Վազգեն Սարգսյանն այցելեց Շինուհայր՝ Ռուբեն Ալեքսանյանի բնակարան: Տողերիս հեղինակն էլ հիշարժան այդ այցի մասնակցից էր: Մինչև կես գիշեր տեսած հանդիպումը, կարելի է ասել, պատմական էր: Հինգ-վեց հոգու համար նախատեսված հանդիպումը ժամեր անց դարձավ բազմամարդ: Եկել էին մեր ազատամարտի բազմաթիվ հրամանատարներ ու երեւելի դեմքեր ինչպես Հայաստանից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղից: Այնտեղ էին նաև ազատամարտի սիսիանցի ու գորիսեցի հրամանատարները: Ներկաները, իհարկե, չէին կարող մտքեր չփոխանակել ռազմաճակատում տիրող դրության շուրջ, բայց հանդիպումն ավելի շատ ոչ պաշտոնական էր: Հրամանատարները ոմնաց սամուցում էին, երգում: Աշտ Միմայանն էլ, եթե չեն սխալվում, Չարենցից էր արտասանում՝ Սպարապետի հորդորով: Հետո ելույթ ունեցավ Վազգեն Սարգսյանը և զննատանքի ջերմ խոսքեր ուղղեց Ռուբեն Ալեքսանյանին, ինչը մոռանալ չի կարելի:

Այդ ամենով հանդերձ, սակայն, Ռուբեն Ալեքսանյանը ժամանակի հետ հարաբերվելու իր չափանիշներն ու սկզբունքներն ուներ: Հեղափոխական չէր, կուսակցական չէր, որեւէ կլանի սպասարկելու թույլություն չունեց, հանդուրժող էր: Պարզապես աշխատանքի և արարումի մարդ էր: Այդ հանգամանքն էր պատճառներից մեկը, որ որոշակի ժամանակահատվածում տեղական իշխանավորների համար նա դարձավ անցանկալի, նույնիսկ՝ անհանդուրժելի տնօրեն: Հանրապետությունում այդ օրերին անարգել վիտուր սպասարկները չէին կարող հանդուրժել ռեստորանի կոնստրուկտորի կայուն ընթացքը, որն իր ներսում վաճառքի ենթակա, թանկարժեք շատ սարքավորումներ ուներ... Տեղի ունեցավ այն, ինչ պիտի տեղի ունենար, ինչ արդեն տեղի էր ունեցել կամ տեղի պիտի ունենար արդյունաբերական մյուս ձեռնարկություններում: 1996-ին, սեփականաշնորհման անվան տակ, կոլեկտիվից բռնագավթեց ռեստորանի կոնստրուկտորի գործարանը: Դրանից հետո, բնականաբար, ձեռնարկության աշխատանքը կանգ առավ: Սկսվեց սարքավորումների թալանը, վաճառվեց այն, ինչ կարելի էր վաճառել: Ռուբենը շատ ծանր տարավ այդ ամենը, մասնավորապես արտադրանքների երախի դեմ մնացել էր մեծ-մեծակ: Ոչ մտածավորները, ոչ ընկերները չկարողացան նեցուկ լինել նրան:

Պատերազմող մեր երկրում աշխատող ձեռնարկությունը մաքսային առաքելություն ուներ՝ անհրաժեշտ էր հնարավորինս աջակցել ազատամարտի ելած ժողովրդին, նոր ձեռավորվող ազգային բանակին և, առհասարակ, երկրի սահմանների պաշտպանությանն ու ամրապնդմանը: Այդ առաքելությունը նա իրականացնում էր սրբորեն՝ իր կամքով, իր խղճի ու քաղաքացիական պարտքի թելադրությամբ: Եվ դա, կարծե՞ք, անկատ չէր մնացել: Այդ ժամանակ էր (տարեթիվը ստույգ չեմ հիշում), երբ ծնունդ մի օր

Հետո, երբ վերավաճառքի հանվեց արդեն կողոպտված ձեռնարկությունը, ինքն անտարբեր չմնաց եւ գնեց դատարկ շենքի վերածված ձեռնարկությունը՝ հույս ունենալով, որ կարող է վերականգնել, ինչը, ավագ, չէր կարող իրականություն դառնալ: Նաեւ այլ բաժնետեր ընդգրկելու միջոցով չկարողացավ կյանքի կոչել գործարանի վերագործարկման իր երազը: 2001թ. հունվարի 1-ին, իբրեւ «Ռեստորան կոնստրուկտորի գործարան» ԲԲԸ-ի տնօրեն, արծակեց բոլոր աշխատողներին և վերջնականապես կապանք դրեց հայաստանյան արդյունաբերության բացառիկ այդ ձեռնարկության դեմքի վրա, ինչը շարունակվում է մինչև հիմա: Նա ակտիվ գործունեությունից հեռացավ՝ չտալով որեւէ բացատրություն, քանզի հասկանում էր, որ բոլորն էլ տեսնում են, թե ինչ է կատարվում...

Իհարկե Ռուբեն Ալեքսանյանի ճակատագիրը յուրօրինակ չէր եւ ոչ էլ հազվադեպ: Նրա ծախողունն իրեն չէր միայն, այլ բոլորին: Նման ճակատագիր ունեցան հեղափոխության շրջանի շատ, ընդ որում՝ լավազույն ղեկավարներ, հայրենասեր ղեկավարներ: Սակայն Ռուբեն Ալեքսանյանը, ի տարբերություն շատերի, ուներ նաև առանձնահատկություններ: Մարդամտությունը, ընկերասիրությունը, դիմացիմունտեմունտ և գնահատելու կարողությունը, կամեցողությունը նրա անգերազանցելի արժանիքներից էին: Չափից ավելի էր վստահում մարդկանց ու գործընկերներին, ինչը քահնց չարաշահվեց, ինչը, ի վերջո, բացասական անդրադարձ ունեցավ իր գործերի վրա:

Ռեստորան կոնստրուկտորի գործարանում ի սկզբանե հավաքվել էին Գորիսի շրջանի տեխնիկական մտավորականության առաջադեմ ներկայացուցիչները: Այդ ձեռնարկությունը սովորական աշխատանքային կոլեկտիվ չէր, դա մի ընտանիք էր, որի մերանը նաև ինքն էր՝ Ռուբենը: Այդպես էլ մնաց, երբ դարձավ մոտ հազար հոգանոց կոլեկտիվի առաջնորդը:

Նա իր հայրենի գյուղի ցմիրայն էր, մեր քարափների ամեն մի ծերպն իր համար մի աշխարհ էր: Իր ձեռքով էր տուն կառուցում ծննդավայր Շինուհայրում, իր ձեռքով էր ծառ տնկում: Ապրում էր գյուղի առօրյայով: Հասկանում էր, որ անկախության դարավոր երազի իրականացումն իր հետ նաև տիրում ու փրփուր է բերել, եւ հավանում էր, որ այդ տիրումն ու փրփուրն անպայման նա-

հանջելու են երբեւէ, եւ կրկին օրակարգ է բարձրանալու գյուղապահպանության խնդիրը: Շինուհայրի ապագան, գյուղի երիտասարդության ապագան չէր պատկերացնում առանց արդյունաբերական ձեռնարկության, եւ մինչև վերջ երազում էր վերականգնված տեսնել գյուղի գործարանը՝ թեկուզեւ այլ արտադրությամբ:

Սովորաբար ամպրոպից հետո աշխարհն ավելի հասկանալի է դառնում: Եվ միայն հիմա ենք բարձրաձայնում, որ արդյունաբերության, տնտեսության գիտակ ու կազմակերպիչ Ռուբեն Ալեքսանյանն իր հողի ջրկիրն էր ու տերը եւ դեռ շատ տալիք ուներ իր գյուղին, իր ձեռնարկությանը, մարդկանց, բայց... ժամանակներն են փոխվել, օրվա հերոսներն են շինծու դարձել, աշխատող և արարող մարդու պատկանումն է կապելու կուռքերն անողը սերմի պես է, որ մահն ընդունելով ծիլեր է արձակում: Այնպես որ Ռուբեն մարդու եւ քաղաքացու, ղեկավարի ու կազմակերպչի տեսակը եղել ու մնալու է պահանջված:

Հատկապես անչափելի էր նրա բարությունը: Եթե հնար լիներ, համոզված եմ, մահվանից առաջ անգամ կասեր բանաստեղծի հայտնի խոսքը. «Ինձամից հետո աշխարհի վրա/ Թող ոչ մի մորմոռ չու զննա...»:

Երբ նրա ցավալի կորստի բոքն առա՛ շատ մեծ ափսոսանք ապրեցի: Հատկապես մեղավոր զգացի, որ ծառի բնի հաստությունը (մաքսային դեպքում) կտրելուց հետո ենք տեսնում միայն, որ կյանքում շատ հաճախ իրար չենք նկատում՝ միմյանց կողքի գտնվելով, որ մարդկանց արժանիքների մասին խոսում ենք հետո, երբ արդեն մարդ չի լինում:

Չէի ասի, որ Ռուբեն Ալեքսանյանից միայն հուշի ծվեներն են մնացել: Նա ստեղծել է մի օրինակելի ընտանիք, տիկին Ռայայի հետ հասարակությանը չորս զավակ պարգևեց: Նրանք ամեն ինչ արեցին Ռուբենի կյանքը փրկելու համար, բայց չստացվեց:

Ռուբենի բոլոր ընկերների անունից ցավակցում են հարազատներին ու մերձավորներին ևս համոզմունք հայտնում, որ նրանք (հատկապես զավակները) լավագույնս կշարունակեն օջախի բարի ավանդույթները: Իսկ Շինուհայրի բարի ծնունդ Ռուբենի անունը, վստահ եմ, կպահպանվի նրան ծանաչողների հիշողության արեւոտ հովիտներում, ինչպես եւ հայրենի գյուղի տարեգրության, մաքսային մարզի տնտեսության՝ երբեւէ գրվելիք պատմություն էջերում:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Եկալը: Իսկապես, հենց այս պարագայում կարող է առավել իրատեսորեն ընկալվել սրբություն բառերը...

Այսպես, մեր նախորդները, բացառապես քաղաքակրթության ընթացքը հարստեւ պահելու նպատակով, «խոր քնի» մեջ են մտել, ու աշխարհ վերադառնալու մասին հրամանից հետո միայն անցնելու են սովորական գոյակիճակի: Այսինքն՝ նրանք չգիտեն ժամկետների մասին: Կա X ժամը:

## Իսկ հիմա անցնենք մեր էպոսին:

Երկարաշունչ էր նախաբանը, բայց եւ նյութն ինքն էր արվելիք եզրահանգումները անհավատալիորեն ֆանտաստիկ են /թեկուզ հնարավոր չէ ժխտել Ատլանտիդայի եւ ատլանտների մասին շրջանառվող մանրամասների հետ մեր էպոսում առկա փաստերի՝ ոչ թե մանուկությունները, այլ՝ նույնականությունը/:

Եվ այսպես. առաջինը Մեծ Միեռի կողմից առյուծին սպանելն է: Եթե

հաշվի առնենք, որ Ատլանտները խոշորամարմին էին (նրանց նախորդած լեմուրները՝ ավելի խոշորամարմին), հաճախ մինչեւ 8 մետր, ապա քաջերից քաջի՝ Միեռի համար, որ թագավոր լինելուց զատ, նաեւ գործող ռազմիկ էր, առյուծը պետք է որ փոքրիկ կատաղած շնիկի պես մի բան լիներ (Հսկաների մասին վկայություններ կան նաեւ Ատլանտաշնչում): Մեր նախնիների հսկայամարմին լինելու մասին է վկայում նաեւ էպոսի «Փոքր Միեռ» ճյուղից հետեւյալ մեջբերումը (էջ 350).

*«Որ քեսան Միեռին՝  
Մեռակ ձիւ վրա նստած՝  
Ինչպես մի մեծ սար կելի սարի վրա  
Շար վախեցան»:*

Այնուհետեւ. իրենից շատ հեռու՝ խոր փոսի մեջ գտնվող Դավթին Օհանը խորհուրդ է տալիս եւ հորդորում: Հիշո՛ւմ եք՝ Ատլանտները մտքեր էին փոխանցում մեծ տարածության վրա:

Երբ փոքր Միեռը պիտի փակվեր Ազնավաքարի քարանձավում, ասվում է, որ հողն արդեն չէր դիմանում նրա ոտքերի տակ: Վաղմշա-

կան ժամանակների մասին Ռուդոլֆ Շտայների «Աշխարհի տարեգրությունից» գրքում կարդում ենք. «Հողն այն ժամանակներում շատ ավելի քիչ էր խիտ ու սորուն էր»:

Հիմա ամենակարեւորի մասին, որ նաեւ հավաստում է էպոսում Ապոկալիպսիսի ու Սոմատիի վերաբերյալ պնդումները: Փոքր Միեռը փակվում է քարանձավում՝ ասելով.

*«Նոր աշխարհ ավերվի, մեկ էլ շինվի,  
Յեքոր ցորեն եղավ քանց մատուր մի,  
Ու գարին եղավ քանց ընկուզ մի  
Էն ժամանակ հրամանք կա, որ  
Ելենք»:*

Իսկ դա է՞ր կարող է լինել: Դե իհարկե՝ գեոմոնտաղիայի դեպքում. արդյո՞ք, նկատի չունի գեոմոնոֆիլիկացված մթերքները՝ սոյան ու այլ ընդդեմը (այդ թվում նաեւ արդեն ավելի խոշորահատիկ ցորենը) եւ կենդանու գեն պարունակող այլ բանջարեղենները, որոնք արդեն չարիք են դառնում եւ կարող են փոխել ԴՆԹ-ն: Ի դեպ, դարձյալ գեոմոնտաղիայի մասին. ասում են, որ 1945թ. Հիբոսիմայի վրա նետված միջուկային ռումբի պայթյունից հետո թեւա-

վոր կատու է ծնվել, իսկ Չեռնոբիլի աղետից հետո այդ տարածքում հազվադեպ չեն երկվախանի կամ վեցստանի հորթերը:

Բայց մինչ այդ, ասում է Միեռը, երբ աշխարհն ավերվի ու նորից շինվի, են ժամանակ միայն «Հրամանք կա, որ ելենք»։ Հիշո՛ւմ եք X ժամի մասին: Այսինքն՝ Փոքր Միեռը նույն Սոմատին է...

Վստահ ենք, համապատասխան մասնագետների կողմից էպոսի ավելի մանրամասն ուսումնասիրությունները կարող են նոր գաղտնիքներ բացահայտել, բայց եւ եղածն էլ բավական է համոզվելու համար՝ եթե ճշմարտություն է մարդկության վաղմջական ժամանակների վերաբերյալ նորագույն կարծիքների ու վարկածների հիման վրա ամբողջացող-կարծրացող տեսությունը (իսկ դրան հավատացողների պատկառելի բանական աստիճանաբար ավելի ու ավելի է մեծանում), ապա, պարզվում է, որ «Սասնա ծռեր» էպոսը կրող ժողովուրդն առնվազն 850-700 հազար տարեկան է:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի ստեղծագործական խորհուրդը հայտարարում է գրական ստեղծագործությունների (արձակ, չափածո) մրցույթ-մրցանակաբաշխություն մինչև 25 տարեկան երիտասարդների միջև:

Մրցանակաբաշխությանը մասնակցել ցանկացողներն իրենց հայտերը (10 բանաստեղծություն, երկու պատմվածք) կարող են ներկայացնել խորհրդին՝ մինչև սույն թվականի սեպտեմբերի 15-ը:

Մրցույթի հաղթողները (առաջին, երկրորդ, երրորդ տեղեր) կարժանանան խրափսուսանքների: Ներկայացված գործերի հիման վրա կկազմվի եւ կիրառարակվի Սյունիքի երիտասարդ ստեղծագործողների արձանագիտությունը:

**ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղը  
Հեռ.՝ (077) 19 73 09**

ՃՅ ԷՇՕáÑÇ ÇÇ»ՕՅ ԿՅ i á0Ý.

Հանգստի լավագույն պայմաններ, սպասարկման բարձր կուլտուրա:

Հասցեն՝  
**գյուղ Յալիձոր,**  
հեռ.՝ (094) 36 17 09



«Տաքելի թելեր» ճոպանուղու մերձակայքի լավագույն հյուրանոցը

Մեկ հոգու գիշերավարձը՝ **4,000** դրամ  
(նախաճաշով՝ **5,000** դրամ):

Խոհանոց՝ զանգեզուրյան ավանդական ճաշատեսակներով, Որոտանի կիրճի այգիների թփից եւ հոնից պատրաստած անզուգական օղիով, հնձանի գինով:

Պատվերի դեպքում՝ նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի առաքում գրասաշրջիկներին ու նրանց խմբերին:

Որոտանի կիրճում ծով շրջագայելու եւ Հարանց անապատ, Հարսնաձոր՝ Շահանդուխտի մատուռ, Հալիձորի անտառ, դիտակետ, Սատանայի կամուրջ այցելելու, Խրիմյան Հայրիկի, Կազգեն Լ-ի, Գարեգին Լ-ի պատվին կանգնեցված հուշաքարերը տեսնելու հնարավորություն:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Պետականորեն հավատարմագրված /պետական հավատարմագիր N178/ ՀՀ «Այունյաց» ինստիտուտը հայտարարում է 2012-13 ուստարվա ընդունելություն հեռակա ուսուցմամբ հետևյալ մասնագիտությունների գծով.

- Իրավագիտություն /Պետական հավատարմագիր N177/
- Ֆինանսներ /Պետական հավատարմագիր N176/

Ուսման վարձը վերոհիշյալ մասնագիտությունների համար 180 000 դրամ է: Սահմանված են ուսման վարձի զեղչեր, անվանական կրթաթոշակներ: Ուսումնառության տարիներին ուսման վարձի փոփոխություն չի կատարվում:

Ուսուցման տեղությունը հինգ տարի է: Համապատասխան բազային կրթությամբ քուլտուրայի եւ բուհերի շրջանավարտները կարող են երկրորդ բարձրագույն մասնագիտություն ստանալ ինստիտուտում, ընդունվելով համապատասխան՝ երկրորդ կամ երրորդ կուրսեր:

Շրջանավարտները կստանան պետական դիպլոմներ եւ կկարողանան ուսումը շարունակել պետական եւ ոչ պետական հավատարմագրված բուհերի մագիստրատուրայում:

Գիտությունները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Գիմուն ռեկտորի ամուսնով /լրացվում է տեղում/
- Կրթության վկայական
- Չորս լուսանկար /3x4/
- Անձնագրի եւ սոց. քարտի պատճենները:

Գիտությունները ընդունելության քննություններ են հանձնում.

Իրավագիտություն մասնագիտության համար.

- ա) հայոց լեզու /գրավոր/
- բ) օտար լեզու /բանավոր/
- գ) հայոց պատմություն /բանավոր/

Ֆինանսներ մասնագիտության համար.

- ա) մաթեմատիկա /գրավոր/
- բ) հայոց լեզու /գրավոր/
- գ) օտար լեզու /բանավոր/

Ընդունելության քննությունները՝ օգոստոսի 20-ից 30-ը: Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, հետևյալ հասցեով՝ ք. Գորիս, Մաշտոցի 2:

**Հեռ. (0284) 2 29 97, (093) 42 95 44, (055) 42 95 44, (077) 80 22 77:**

**Այունյաց երկիր**

Տ Ա Ս Ն Ո Ր Տ Ա Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝  
ԷՁ Ծ1 Գ Է Զ ԵՁ ՍՍՁ Ս

Հասցե՝ Կապան, Շահանյան 20/32:  
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Քննարկի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ Օ1Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 2250, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.08.2012թ.:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԻ ՍԻՍԻՍՏԵՄ ՄԱՆԱԶՅՈՒՄԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2012-13 ՈՒՍԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

Հ/Հ	Մասնագիտություն	Ընդունելության քննություններ		
		Մրցութային		Ոչ մրցութային
1.	Ազրոնոմիա	Կ(զ) կամ Ս(զ)	Ք(զ)** կամ Կ(զ)	Հլ(զ)*
2.	Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա	Ս(զ)	Ք(զ)** կամ Ֆ(զ)**	Հլ(զ)*
3.	Հողաշինարարություն եւ հողային կադաստր	Ս(զ)	Ֆ(զ)**	Հլ(զ)*
4.	Ազրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում	Ս(զ)	Հլ(զ)	Օտ. լ(զ)
5.	Ազրարենային համակարգի հաշվապահական հաշվառում եւ աուդիտ	Ս(զ)	Հլ(զ)	Օտ. լ(զ)
6.	Անասնաբուծություն	Կ(զ) կամ Ս(զ)	Ք(զ)** կամ Կ(զ)**	Հլ(զ)*
7.	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	Կ(զ) կամ Ս(զ)	Ք(զ)** կամ Կ(զ)**	Հլ(զ)*

Հեռակա դեպարտամենտ դիմող դիմորդները կարող են նաեւ չհանձնել միասնական քննություններ, քանի որ քննությունները կանցկացվեն համալսարանում: Միասնական քննություն հանձնած դիմորդներն ընդունվում են առանց քննության:

Փաստաթղթերը ընդունվում են ս/թ օգոստոսի 10-ից մինչեւ սեպտեմբերի 30-ը: Հեռ. (0 283) 2-37-04, (0 93)19-74-49, էլ. փոստ՝ kostandyan@rambler.ru

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Կապանի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը հայտարարում է «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ: Մրցույթին մասնակցելու հավակնորդների դիմումները եւ փաստաթղթերն ընդունվում են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչությունում, 2012թ. օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 5-ը ներառյալ ժամը 9.00-ից մինչեւ 18.00-ը, ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Մրցույթն անց է կացվելու 2012թ. հոկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում ժամը 11.00-ին: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են.

- դիմում (խորհրդի նախագահի ամուսնով),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն (ծեռագիր),
- անձնագրի, սոցիալական ապահովության քարտի (կամ դրան օրենքով նախատեսված կարգով փոխարինող փաստաթղթի) եւ բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
- գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը՝ առկայության դեպքում,
- բնութագրի՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը, որը ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ,

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի ՀՀ այն գործունակ, չափահաս քաղաքացին, ով տիրապետում է գրական հայերենին:

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ: Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ եւ ընդունվում: Քաղաքացին կարող է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնել, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն: Տնօրենի պաշտոնում չի կարող ճշանակվել այն անձը՝

- ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- ով տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը,
- ով խուսափել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից,
- ով դատապարտվել է հանցագործության կատարման համար եւ նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:
- ուն օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել, կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից,
- ով նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված եւ պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

Տնօրենի մրցույթի մասնակցներին ներկայացվող պարտադիր պահանջներն են՝

- բարձրագույն բժշկական կրթությունը,
- կրթության կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի առկայությունը,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացությունը /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն եւ այլ իրավական ակտեր/,
- տրամաբանելու եւ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողությունը,
- առնվազն մեկ օտար լեզվի իմացությունը,
- կազմակերպության զարգացման ծրագիր մշակելու կարողությունը եւ աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման անհրաժեշտ հմտությունը,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակությունը,
- չի լրացել թեկնածուի 65 տարին:

Տնօրենը չի կարող՝

- կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից,
- անձամբ զբաղվել ձեռնակատիրական գործունեությամբ,
- լինել երրորդ անձանց ներկայացուցիչ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելիք իր կողմից,
- ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ (0285) 5 29 92, (0285) 5 25 70:**

**ԿՈՐԵԼ Է** Երեւանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի 1988-89 ուստարվա շրջանավարտ Ռոմիկ Ռազմիկի Սարգսյանի ՔԲ N 007999 դիպլոմը (գրանցման N155): Համարել անվավեր: